



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1659

top







12  
Группа 1

Группа 2

Группа 3

Группа 4

1875





ՀԱՅՐ , ԹՈՂ, ԳՈՅԱ ՁԻ ՈՉ ԳԻՏԵՆ  
ՁԻՆՉ ԳՈՐԾԵՆ





ԱՂՕՐԻ ՊԻՏԱՆԻՔ  
Ի ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՉԻՆ  
ՀԱԻԱՏԱՅԵԼՈՅ Ի ՔՐԻՍՏՈՍ

ԱՐԱՐԵԱԼ

Սրբոյն Ներսիսի Շնորհալուոյ Հայոց  
Կաթողիկոսի

ՀԱԻԱՏՈՎ խոստովանիմ և եր-  
կիր պաղանեմ քեզ՝ Հայր և



Որդի և սուրբ Հոգի, անեղ  
և անմահ Քրիստոսին, արա-  
րիչ հրեշտակաց և մարդկան  
և ամենայն եղելոց, և ողոր-  
մեաց քո արարածոց, և ինձ  
բազմամեղիս :

Հաւատով խոստովանիմ, և  
երկիր պագ անեմ քեզ՝ անբա-  
ժանելի լոյս, միասնական  
սուրբ Երրորդութիւն և մի  
Աստուածութիւն, արարիչ  
լուսոյ և հալածիչ խաւարի .  
հալածեա ՚ի հոգւոյ իմմէ  
զխաւար մեղաց և անգիտու-  
թեան, և լուսաւորեա զմիտս  
իմ ՚ի ժամուս յայսմիկ աղո-  
թել քեզ ՚ի հաճոյս, և բնդու-



նել 'ի քէն զխնդրուածս իմ,  
և ողորմեա քո սրտաբաժոյ,  
և ինձ բազմամեղիս :



Հայր երկնաւոր Սատուած  
ճշմարիտ՝ որ առաքեցեր զՈր-  
դիդ քո սիրելի 'ի խնդիր մար-  
րեալ ոչխարին, մեղայ յերկի-  
նքս և առաջի քո . ընկալ զիս  
որպէս զանատակ որդին, և  
զգեցո ինձ զպատմութեանս զա-  
ռաջին՝ զոր մերկայցայ մեղօք .



և ողորմեա քո արարածոց, և  
ինձ բազմամեղիս :

Որդի Աստուծոյ Աստուած  
ճշմարիտ՝ որ խոնարհեցար 'ի  
հայրական ծոցոյ, և առեր  
մարմին 'ի սրբոյ կուսէն Մա-  
րիամայ վասն մերոյ փրկու-  
թեան . խաչեցար, թաղեցար



և յարեար 'ի մեռելոց, և



Համբարձար փառօք փառ Հայր,  
մեղայ յերկինս և առաջի քո .  
յիշեա զիս որպէս զաւագակն  
յորժամ գաս արքայութեամբ  
քով . և ողորմեա :

Հոգի Աստուծոյ Աստուած  
ճշմարիտ՝ որ իջեր 'ի Յորդա-  
նան և 'ի վերնաստուենն , և  
լուսաւորեցեր զիս մկրտու-  
թեամբ սուրբ աւագանին , մե-  
ղայ յերկինս և առաջի քո .  
մաքրեա զիս վերասին Աս-  
տուածային հրով քով որպէս  
հրեղէն լեզուօք սուրբ զա-  
ռաքեալսն . և ո :

Անեղ բնութիւն՝ մեղայ քեզ  
մտօք իմովք , հոգւով և մարմ-



նով իմով. մի՛ յիշեր զմեզս իմ  
զառաջինս վասն անուանդ  
քում սրբոյ . և ո :

Տեսող ամենայնի՛ մեղայ  
քեզ խորհրդով բանիւ և գոր-  
ծով. ջնջեա զձեռագիր յան-  
ցանայ իմոց , և գրեա զա-  
նուն իմ 'ի դպրութեան կե-  
նայ . և ո :

Քննող գաղտնեաց՝ մեղայ





քեզ կամաւ և ակամայ, դի-  
տութեամբ և անդիտու-  
թեամբ. թողութիւն շնորհեա  
մեղաւորիս, զի 'ի ծննդենէ  
սուրբ Աւագանին մինչև ցայ-  
սօր մեղուցեալ եմ առաջի  
Աստուածութեանդ քոյ զգա-  
յարանօք իմովք, և ամե-  
նայն անդամօք մարմնոյս. և :

Ամենախնամ Տէր՝ դիր պա-  
հապան աչաց իմոց զերկիւղ  
քո սուրբ՝ ոչ եւս հայիլ յա-  
րատ, և ականջաց իմոց՝ ոչ  
ախորժել լսել զբանս չարու-  
թեան. և բերանոյ իմոց՝ ոչ  
խօսիլ զստութիւն. և սրտի ի-  
մոց՝ ոչ խորհիլ զչարութիւն.



և ձեռաց խնոց՝ ոչ գործել զանհրաւութիւն . և ոտից խնոց՝ ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան . այլ ուղղեա ըզշարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի . և ո :

Հուր կենդանի Քրիստոս՝ զհուր սիրոյ քո զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ, զի այրեացէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեացէ զխիղճ մտաց իմոյ, և մաքրեացէ զվեղս մարմնոյ իմոյ, և վառեացէ զլոյս գիտութեան քոյ 'ի սրբտի իմում . և ո :

Իմաստութիւն Հօր Յիսուս՝



տուր ինձ իմաստութիւն զբա-  
րիս խորհիլ և խօսիլ և գործել  
առաջի քո յամենայն ժամ. 'ի  
չար խորհրդոց, 'ի բանից և  
'ի գործոց փրկեա զիս, և ու :

Կամեցող բարեաց Տէր կա-  
մարար՝ մի՛ թողուր զիս 'ի կամս  
անձին իմոյ գնալ, այլ առաջ-  
նորդեա ինձ լինել միշտ բառ  
կամաց քոց բարեսիրաց, և ու .

Արքայ երկնաւոր՝ տուր ինձ  
զարքայութիւն քո՝ զոր խոս-  
տացար սիրելեաց քոց, և  
զօրացո զսիրտ իմ առել զմե-  
ղքս, և սիրել զքեզ միայն,  
և առնել զկամս քո, և ու :

Խնամող արարածոց՝ պահ-





Եւա նշանաւ Խաչի քոյ զհոգի  
և զմարմին իմ՝ ի պատրանաց  
մեղաց, ի փորձութեանց դի-  
ւաց, և ի մարգոց անիրա-  
ւաց, և յամենայն վտանգից  
հոգւոյ և մարմնոյ. և ու :

Պահապան ամենայնի Գրիս-  
տոս՝ աջ քո հովանի լիցի ի  
վերայ իմ՝ ի տուէ և ի գիշե-  
րի, ի նաաիլ ի տան, ի գը-  
նալ ի ճանապարհ, ի ննջել  
և ի յառնել, զի մի՛ երբէք



սասանեցայց . և ու :

Աստուած իմ՝ որ բանաս  
զձեռն քո , և ընտւ զամենայն  
արարածս ողորմութեամբ քով,  
քեզ յանձն առնեմ զանձն իմ .



դու հոգա և պատրաստեա  
ղպէտա հոգւոյ և մարմնոյ ի .



մոյ յայսմ հետէ մինչև յա-  
ւիտեան . և ո .

Իարձուցիչ մուրրելոյ՝ դար-  
ձո զիս 'ի չար սովորութեանց  
իմոց 'ի բարի սովորութիւն .  
և բեւեռեա 'ի հոգի իմ ըզ  
ստակալի օր մահունն , և զեր-  
կիւզ գեհեհնին , և զսէր ար-  
քայութեանն , զի զղջացայց  
'ի մեղաց , և գործեցից զար-  
դարութիւն . և ո :

Ազբիւր անմահութեան՝ աղ-  
բերացո 'ի սրտէ իմմէ զար-  
տասուս ապաշխարութեան  
որպէս պոռնկին . զի լուացից  
զմեղս անձին իմոյ յառաջ քան  
զեւանելն իմ յաշխարհէս . և :



Պարգեւիչ ողորմութեան՝  
պարգեւեա ինձ ուղղափառ  
հաւատով և բարի գործով,  
և սուրբ մարմնոյ և արեան  
քո հաղորդութեամբ դալ առ  
քեզ . և ո :

Բարերար Տէր՝ հրեշտակի  
բարւոյ յանձն արասցես զիս  
քաղցրութեամբ աւանդել ըզ  
հոգի իմ, և անխռով անցու  
ցանել ընդ չարութիւն այսու  
ցրն՝ որք են ՚ի ներքոյ երկ  
նից . և ո :

Կոյս հշմարիտ Քրիստոս՝  
արժանաւորեա զհոգի իմ ու  
րախութեամբ տեսանել զչոյս  
փառաց քոց ՚ի կոչման աւուրն,



և հանդչիլ յուսով բարեաց  
յօթեւանս արդարոց մինչև  
յօր մեծի դալստեան քո . և ու  
Դատաւոր արդար՝ յորժամ  
դաս փառօք հօր դատել բզ  
կենդանիս և զմեռեալս , մի՛



մտաներ ՚ի դատաստանս ընդ  
ծառայի քում . այլ փրկեա



զիս 'ի յաւիտեանական հրոյն ,  
և լսելի արա ինձ զերանաւէտ  
կոչումն արդարոց յերկնից  
արքայութիւնդ . և ո :

Ամենողորմ Տէր՝ ողորմեա  
ամենայն հաւատացելոց 'ի  
քեզ , իմոց և օտարաց , ծա-  
նօթից և անծանօթից , կեն-  
դանեաց և մեռելոց . շնոր-  
հեա և թշնամեաց իմոց և ա-  
տելեաց զթողութիւն որ ա-  
ռիս յանցանաց . և դարձո  
զնոսա 'ի չարեացն՝ զոր ունին  
վասն իմ , զի ողորմութեանդ  
քում արժանի եղիցին . և ո :

Փառաւորեալ Տէր՝ բնկալ  
զաղաչանս ծառայիս քո , և



կատարեա 'ի բարի զխնդրք-  
ուածս իմ բարեխօսութեամբ  
սրբուհւոյ Աստուածածնին ,  
և Յովհաննու Մկրտչին , և  
սրբոյն Ստեփաննոսի նախա-  
վկային , և սրբոյն Գրիգորի  
մերոյ Հոսաւորչին , և սրբոյ  
Առաքելոյ , Մարգարէից ,  
Վարդապետաց , Մարտիրո-  
սաց , Հայրապետաց , Ճգնա-  
ւորաց , Կուսանաց , Միան-  
ձանց , և ամենայն Սրբոց քոց  
երկնաւորաց և երկրաւորաց :  
Եւ քեզ փառք եւ երկրպա-  
գութիւն անբաժանելի սուրբ  
Երրորդութեանդ յաւիտեանս  
յաւիտենից . ամէն :





ԱՂՕԹԻՔ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ



ԱՆՍԿԻՋԲՆ Աստուած՝ անեղ  
Աստուած՝ անխմանալի Աստ-  
ուած՝ անպարագրելի Աստ-  
ուած՝ անծին Աստուած՝ ան-  
մենարքայ Աստուած՝ ամե-  
նարարիչ Աստուած՝ ամենար-  
փի Աստուած՝ ամենագէտ



Սատուած՝ ամենարագ Սատ-  
ուած՝ ամենադատ Սատուած՝  
ամենամեծ Սատուած՝ ամե-  
նազբիւր Սատուած՝ ամենար-  
մատ Սատուած՝ ամենարձակ  
Սատուած՝ ամենաայց Սատ-  
ուած՝ ամենայցեւոյ Սատուած՝  
ամենազղու ամենազղիչ Սա-  
տուած՝ ամենասաց Սատուած՝  
ամենարթուն Սատուած՝ ամե-  
նարաւ Սատուած՝ ամենա-  
բարձրեալ Սատուած՝ ամենա-  
բերկրեալ Սատուած՝ ամենա-  
բաւական Սատուած՝ ամենա-  
բարի Սատուած՝ ամենարոյժ  
Սատուած՝ ամենարուժիչ Սա-  
տուած՝ ամենարուղիս Սատ-



ուլած՝ ամենաբաշխ Սատուլած՝  
ամենաբաշխող Սատուլած՝ ամ-  
եննազով Սատուլած՝ ամենա-  
զովելի Սատուլած՝ ամենազո-  
վեալ Սատուլած՝ ամենազութ  
Սատուլած՝ ամենազթամ Սա-  
տուլած՝ ամենազախչ Սա-  
տուլած՝ ամենազանձ Սատուլած՝  
ամենազորով Սատուլած՝ ամե-  
նայար Սատուլած՝ ամենադա-  
տաւոր Սատուլած՝ ամենադա-  
ւանեալ Սատուլած՝ ամենա-  
դիր Սատուլած՝ ամենադար-  
ման Սատուլած՝ ամենադար-  
մանիչ Սատուլած՝ ամենաեղե-  
րիչ Սատուլած՝ ամենաերբ Սա-  
տուլած՝ ամենազօր Սատուլած՝



ամենազօրեղ Սասունամ՝ ամեն  
նազարդ Սասունամ՝ ամենա  
զարդարող Սասունամ՝ ամեն  
նազարդ արիչ Սասունամ՝ ամեն  
նազեղ Սասունամ՝ ամենափրր  
կիչ Սասունամ՝ ամենատէն Սաս  
ունամ՝ ամենատէակ Սասունամ՝  
ամենաերկինք Սասունամ՝ ամ  
ենասառըք Սասունամ՝ ամեն  
նոզորս Սասունամ՝ ամենամեծ  
Սասունամ՝ ամենամաքուր Սա  
սունամ՝ ամենաքնարող Սաս  
ունամ՝ ամենաքնդունակ Սաս  
ունամ՝ ամենաքնդունող Սաս  
ունամ՝ ամենաքղձունս Սաս  
ունամ՝ ամենաթագ Սասունամ՝  
ամենաթագաւոր Սասունամ՝



ամենածառանդ Մատուած՝  
ամենախշխան Մատուած՝ ամ-  
մենախշխող Մատուած՝ ամե-  
նախմաստ Մատուած՝ ամենա-  
խրաւ Մատուած՝ ամենալոյս  
Մատուած՝ ամենալիր Մատ-  
ուած՝ ամենալուսն Մատ-  
ուած՝ ամենախնամ Մատուած՝  
ամենախնամող Մատուած՝ ամ-  
մենախօս Մատուած՝ ամենա-  
խրատ Մատուած՝ ամենախո-  
րին Մատուած՝ ամենախոր-  
հուրդ Մատուած՝ ամենածա-  
գումն Մատուած՝ ամենածա-  
ւալ Մատուած՝ ամենակալ Մա-  
տուած՝ ամենակարող Մատ-  
ուած՝ ամենակիր Մատուած՝



ամենակրող Սատուած՝ ամե-  
նակայծ Սատուած՝ ամենա-  
կատար Սատուած՝ ամենակոչ  
Սատուած՝ ամենակէտ Սատ-  
ուած՝ ամենահաս Սատուած՝  
ամենահասու Սատուած՝ ամե-  
նահաստատ Սատուած՝ ամե-  
նահաստատիչ Սատուած՝ ամե-  
նաձիր Սատուած՝ ամենա-  
ձեռն Սատուած՝ ամենաձե-  
ռքնու Սատուած՝ ամենա-  
ղեկավար Սատուած՝ ամենա-  
ղամբար Սատուած՝ ամենա-  
ճարակ Սատուած՝ ամենաճա-  
ռադայթ Սատուած՝ ամենա-  
ճշմարիտ Սատուած՝ ամենա-  
մաքրիչ Սատուած՝ ամենա-



մարդ Աստուած՝ ամենամար-  
դիչ Աստուած՝ ամենայարոյց  
Աստուած՝ ամենայառաջ Աս-  
տուած՝ ամենուրեք Աստ-  
ուած՝ ամենայորդոր Աստ-  
ուած՝ ամենայորդորիչ Աստ-  
ուած՝ ամենայոյս Աստուած՝  
ամենաչարժ Աստուած՝ ամե-  
նաչուրջ Աստուած՝ ամենա-  
չահ Աստուած՝ ամենաչահա-  
ւոր Աստուած՝ ամենաչէն Աս-  
տուած՝ ամենաուղորդ Աստ-  
ուած՝ ամենաուղիղ Աստ-  
ուած՝ ամենաուժեղ Աստ-  
ուած՝ ամենաուղ Աստուած՝  
ամենաչափող Աստուած՝ ամ-  
ենապատիւ Աստուած՝ ամե-



նապարդև Աստուած՝ ամե-  
նասատիչ Աստուած՝ ամենա-  
պարզ Աստուած՝ ամենապար-  
զիչ Աստուած՝ ամենապահ  
Աստուած՝ ամենապահող Աս-  
տուած՝ ամենապարագրող  
Աստուած՝ ամենապայծառ  
Աստուած՝ ամենապարոյր Աս-  
տուած՝ ամենաջահ Աստուած՝  
ամենաջան Աստուած՝ ամե-  
նաջամբ Աստուած՝ ամենա-  
ռատ Աստուած՝ ամենաառա-  
տացուցիչ Աստուած՝ ամենա-  
սքրբիչ Աստուած՝ ամենա-  
սահման Աստուած՝ ամենա-  
սահմանիչ Աստուած՝ ամենա-  
սանձ Աստուած՝ ամենասան-



ճող Սասունացիք  
Սասունացիք ամենասուրբ Սասունացիք  
Սասունացիք ամենապարտիկ Սասունացիք  
Սասունացիք ամենամաքրիկ Սասունացիք  
Սասունացիք ամենախայեղուկ Սասունացիք  
Սասունացիք ամենատէր Սասունացիք  
ամենատիրող Սասունացիք ամենատեղ Սասունացիք  
ամենատուն Սասունացիք ամենատուն  
Սասունացիք ամենատես Սասունացիք  
Սասունացիք ամենատեսուկ Սասունացիք  
Սասունացիք ամենապատիւ Սասունացիք  
Սասունացիք ամենարարուն Սասունացիք  
Սասունացիք ամենարամից Սասունացիք  
Սասունացիք ամենացօղ Սասունացիք  
ամենացայտ Սասունացիք ամեն



նացայդ Աստուած՝ ամենա-  
ցընծու թիւն Աստուած՝ ամե-  
նացանկ Աստուած՝ ամենա-  
ցանկալի Աստուած՝ ամենա-  
փառք Աստուած՝ ամենափայլ  
ամենափայլող Աստուած՝ ա-  
մենափայլեալ Աստուած՝ ա-  
մենափայլիչ Աստուած՝ ամե-  
նափայլ թ Աստուած՝ ամենա-  
փըրկող Աստուած՝ ամենա-  
փըրկիչ Աստուած՝ ամենաքաւ  
Աստուած՝ ամենաքաւիչ Աս-  
տուած՝ ամենաքարող ամե-  
նաքարողիչ Աստուած՝ ան-  
ճառ Աստուած՝ անճառար-  
քայ Աստուած՝ անճառար-  
քայութիւն Աստուած՝ ան-



ճառադատութիւն Սատուած՝  
անճառադրիւր Սատուած՝ ան-  
ճառարարիչ Սատուած՝ ան-  
ճառապենիազ Սատուած՝ ան-  
ճառարիւթի Սատուած՝ անճա-  
ռահաւոր Սատուած՝ անճա-  
ռախոր Սատուած՝ անճառա-  
բարի Սատուած՝ անճառա-  
բաց Սատուած՝ անճառարուղիս  
Սատուած՝ անճառադութ  
Սատուած՝ անճառադոր Սատ-  
ուած՝ անճառիմաստ Սատ-  
ուած՝ անճառալուր Սատ-  
ուած՝ անճառածագ Սատ-  
ուած՝ անճառագով Սատուած՝  
անճառողորմ Սատուած՝ ան-  
ճառաչափ Սատուած՝ անճա-



ուպատիւ Աստուած՝ անճա-  
ուպիհ Աստուած՝ անճառա-  
փառք Աստուած՝ անճառա-  
փայլ Աստուած՝ անախտ Աստ-  
ուած՝ անեղբ Աստուած՝ ա-  
նեղծ Աստուած՝ անբարոնելի  
Աստուած՝ անժամանակ Աստ-  
ուած՝ անըռելի Աստուած՝ ան-  
խարդախ Աստուած՝ անծայր  
Աստուած՝ անկետղ Աստուած՝  
անհասանելի Աստուած՝ ան-  
ղօղելի Աստուած՝ անմեկնելի  
Աստուած՝ անյիշաչար Աստ-  
ուած՝ աննինջ Աստուած՝ ան-  
չարժ Աստուած՝ անոխակալ  
Աստուած՝ անպատմելի Աստ-  
ուած՝ անկոխելի Աստուած՝



աննեղելի Աստուած՝ անօրի-

նակ Աստուած :

Բարի Աստուած՝ բարեմիտ

Աստուած՝ բարի բնութիւն

Աստուած՝ բարեաց բարի Աս-

տուած՝ բարեգութ Աստ-

ուած՝ բարեբաշխ Աստուած՝

բարեբարոյ Աստուած՝ բարե-

խորհուրդ Աստուած՝ բար-

եաց պարգեւող Աստուած՝

բարեսէր Աստուած :

Գովեալ Աստուած՝ գերի-

վերոյ Աստուած՝ գերազարդ

Աստուած՝ գոհարանեալ Աս-

տուած՝ գերապանծ Աստ-

ուած՝ գեղեցիկ Աստուած՝

գերազոյն Աստուած՝ գոյա-



ցուցիչ Աստուած :

Գատաւոր Աստուած՝ դատաւորաց գէտ Աստուած՝ դիտապետ Աստուած՝ դատաւորիչ Աստուած՝ դաւանեալ Աստուած՝ դատուց վերնոց Աստուած՝ դեղ կենաց Աստուած՝ դրախտ Աստուած՝ դատախարակող Աստուած :  
Երրորդութիւն Աստուած՝ երկինք Աստուած՝ երկնաւորաց Աստուած՝ երկրաւորաց Աստուած :

Զօրաւոր Աստուած՝ զօրեղ Աստուած՝ զուարթնոց Աստուած՝ զարդարող Աստուած՝ զարմանք Աստուած՝ զարմա-



Նայի Աստուած՝ զարհուրելի  
Աստուած՝ զարգային Աստ-  
ուած :

Էրեակ և մի Աստուած՝ է-  
րանեալ Աստուած՝ էական  
Աստուած՝ էացուցիչ Աստ-  
ուած՝ էութիւն Աստուած :

Թաղաւորայ Աստուած՝  
Թաքեալ Աստուած՝ Թողիչ  
մեղաց Աստուած՝ Թողելոց  
յարութիւն Աստուած՝ Թըշ-  
նամեաց սաստիկիչ Աստուած :

Ժառանգութիւն Աստուած՝  
Ժամանակեալ Աստուած՝ Ժա-  
մանող Աստուած՝ Ժամանա-  
կաց Աստուած :

Ի սկզբանէ Աստուած՝ ինք-



Նակիամ Սատուամ՝ ինքնազոյ  
Սատուամ՝ ինքնակալ Սատ-  
ուամ՝ ինքնատար Սատուամ՝  
ինքնակարոյ Սատուամ՝ ինք-  
նիշխան Սատուամ՝ իշխող  
Սատուամ՝ ՚ի բարձունս Սատ-  
ուամ՝ իմանալի Սատուամ :

Լոյս Սատուամ՝ լոյս անբառ-  
ուեր Սատուամ՝ լոյս թափան-  
ցիկ Սատուամ՝ լուսազգեստ  
Սատուամ՝ լուսաբերիչ Սատ-  
ուամ՝ լուսազարդ Սատուամ՝  
լուսատու Սատուամ՝ լուսա-  
ճեմ Սատուամ՝ լող Սատ-  
ուամ՝ լիութիւն Սատուամ՝  
լցուցիչ Սատուամ :

Խոր անքննին Սատուամ՝



խաղաղութիւն Աստուած՝  
խաղաղարար Աստուած՝ խնա-  
մեղ Աստուած՝ խնամիչ Աստ-  
ուած՝ խրատիչ Աստուած՝  
խանդաղատող Աստուած՝  
խորհուրդ Աստուած՝ խոր-  
հրդապետ Աստուած՝ խրն-  
դրուած Աստուած՝ խորհր-  
դադէտ Աստուած՝ խնդրող  
Աստուած՝ խոնարհ Աստուած:  
Ծագումն Աստուած՝ ծնող  
Աստուած՝ ծագող Աստուած՝  
ծարաւերոյ Աստուած՝ ծա-  
նուցեալ Աստուած՝ ծանու-  
ցիչ Աստուած՝ ծառայից տէր  
Աստուած՝ ծածկատես Աստ-  
ուած՝ ծածկադէտ Աստուած՝



Ժայր Աստուած :

Կենդանի Աստուած՝ կեն-  
դանարար Աստուած՝ կենդա-  
նատու Աստուած՝ կենդանա-  
ցուցիչ Աստուած՝ կերանկրող  
Աստուած՝ կամարար Աստ-  
ուած՝ կեանք Աստուած՝ կա-  
մեցող բարեաց Աստուած՝  
կատարեալ Աստուած՝ կա-  
ռավարող Աստուած՝ կուրաց  
լուսատու Աստուած :

Հայր Աստուած՝ հօր որդի  
Աստուած՝ հոգի սուրբ Աստ-  
ուած՝ հաւատ Աստուած՝ հա-  
մերց լեզուատու Աստուած՝  
հոգւոց ազատիչ Աստուած՝  
հրածորան Աստուած՝ հրա-



Լիրող Աստուած՝ հինաւորաց  
Աստուած՝ հարուստ Աստ-  
ուած՝ հանուրց Աստուած՝  
հաւատարիստ Աստուած :  
Չայն Աստուած՝ ճայնող  
Աստուած՝ ճեռնտու Աստ-  
ուած՝ ճայնից լսող Աստուած՝  
ճիր Աստուած՝ ճիրաբաշխ  
Աստուած :

Ղեկաւար Աստուած՝ ղե-  
կապետ Աստուած՝ ղամպար  
Աստուած :

Ճշմարիտ Աստուած՝ ճշմար-  
տութիւն Աստուած՝ ճշմար-  
տասէր Աստուած՝ ճարտա-  
րապետ Աստուած՝ ճառա-  
գայթ Աստուած՝ ճառագայ-



Թեալ Աստուած՝ ճոխ Աստուած՝ ճաշակ Աստուած՝ ճար Աստուած՝ ճանապարհ կենաց Աստուած՝ ճանապարհ բարեաց Աստուած՝ ճառ Աստուած՝ ճոռոմ Աստուած :

Մեծարեալ Աստուած՝ մեծապատիւ Աստուած՝ մաքրիչ Աստուած՝ մաքրութիւն Աստուած՝ մաքրող Աստուած՝ մահու լուծանող Աստուած՝ մեղաւորաց դարձ Աստուած :

Յայտնութիւն Աստուած՝ յաւիտեան Աստուած՝ յաւիտենից Աստուած՝ յարութիւն Աստուած՝ յուսացելոց Աստուած՝ յուսադրող Աստուած :



յարուցիչ Աստուած՝ յառաջ  
Աստուած :

Նեղերոց յոյս Աստուած՝ նու-  
րահրաշ Աստուած՝ նաւապետ  
բարի Աստուած :

Ենորհ Աստուած՝ շնորհա-  
տու Աստուած՝ շուրջ Աստ-  
ուած՝ շուրջանակիս Աստուած՝  
շնորհող Աստուած՝ շնորհաբեր  
Աստուած՝ շաւիղ Աստուած :

Ողորմած Աստուած՝ ողոր-  
մութիւնս Աստուած՝ ուղիղ Աս-  
տուած՝ ուղղորդ Աստուած՝  
ուղղորդաւեր Աստուած՝ ուղ-  
ղորդապետ Աստուած՝ ուղ-  
ղորդախօս Աստուած՝ ուղ-  
ղորդաբան Աստուած :



Զարատեաց Սատուած՝ չարա-  
րասաս Սատուած՝ չարամերժ  
Սատուած՝ չարաբարձ Սատ-  
ուած՝ չարահերձ Սատուած՝  
չարայաղթ Սատուած :

Պահապան Սատուած՝ պահ-  
պանիչ Սատուած՝ պետ Սատ-  
ուած՝ պետական Սատուած՝  
պատուելի Սատուած՝ պա-  
րունակող Սատուած :

Զահ Սատուած՝ ջահարյու  
Սատուած՝ ջահապայծառ Սա-  
տուած՝ ջան Սատուած՝ ջամ-  
բող Սատուած՝ ջերմեռան-  
դութիւն Սատուած :

Ռահ Սատուած՝ ռահ լոյս  
Սատուած՝ ռատարաչիս Սատ-



ուամ՝ և աստափայլ Աստուած՝  
և ետին ըսողցր Աստուած՝  
և ասհափարժ Աստուած :

Սուրբ Աստուած՝ սրբու-  
թիւն Աստուած՝ սարաւօղ  
Աստուած՝ սէր Աստուած՝ սի-  
րելի Աստուած՝ սահմանադիր  
Աստուած՝ ստեղծող Աստ-  
ուած՝ սրբոց Աստուած՝ սու-  
կալի Աստուած :

Վեհ Աստուած՝ վեհագոյն  
Աստուած՝ վայելչութիւն Աս-  
տուած՝ վերահացու Աստ-  
ուած՝ վարժիչ Աստուած :

Տէր Աստուած՝ տեսող Աս-  
տուած՝ տիւ Աստուած՝ տը-  
ւիչ բարեաց Աստուած՝ տրրա-



մեցելոց Աստուած :

Բարուն Աստուած՝ բարու  
նապետ Աստուած՝ բախարար  
Աստուած :

Յնծուծիւն Աստուած՝ ցան-  
կալի Աստուած՝ ցաւոց բժիշկ  
Աստուած՝ ցողահոս Աստուած :

Փառք Աստուած՝ փառա-  
ւորեալ Աստուած՝ փառահեղ  
Աստուած՝ փառարանեալ Աս-  
տուած՝ փրկիչ Աստուած՝ փրկ-  
կող Աստուած՝ փարթամ Աս-  
տուած՝ փարատիչ ցաւոց Աս-  
տուած՝ փառաղօր Աստուած՝  
փառք՝ ի բարձունս Աստուած :


Քահանայապետ Աստուած՝  
քերովբէանիստ Աստուած՝



քաւիչ Աստուած՝ քաւու  
թիւն Աստուած՝ քաւարան  
Աստուած՝ քարոզիչ Աստ-  
ուած՝ քննող Աստուած :  
Օրէնք Աստուած՝ օրինա-  
դիր Աստուած՝ օրհնիչ Աստ-  
ուած՝ օրհնեալ Աստուած՝  
օրհնարանեալ Աստուած :  
Քո սուրբ և ահեղ անուան-  
ցիդ զօրութեամբ՝ Տէր Աստ-  
ուած ամենակալ . եղիցիս  
պահապան ծառայիս :








ՔԱՒԵԱԼ ԵՄ ԵՍ ՅԱՐԵՆԷՅ ԲՐԴԱՐՈՅԻ  
ԱՅԴՈՐԻԿ :



Ա Ղ Օ Թ Ք

Վասն կապանաց , դիւաց և կա-  
խարդաց ազանդաւորաց և վասն  
դատաստանի յաշողելոյ :



ԹԱՂԱՒՈՐ հղօր , ապաւէն  
ծարաւելոյ , փրկիչ նեղելոյ ,  
որ վասն մեր խոնարհեցար 'ի  
հայրական ծոցոյ և առեր  
մարմին 'ի սրբոյ կուսէն Մա-  
րիամայ վասն մերոյ փրկու-  
թեան . մատնեցար , բմբռ-  
նեցար , չարչարեցար , խաչե-  
ցար և թաղեցար և յար-  
եար 'ի մեռելոյ , և համբար-  
ձար վառօք առ հայր . զար-  
թո զգորութիւն քո և եկ 'ի  
կեցուցանել զգինս արեան քոյ



Տէր . և մի՛ տար գրել սա-  
տանայի գրո փրկեալս և մի՛  
տար բնակութիւն չարին՝ բզ  
տաճար անուանող քում սրբ-  
բոյ . և մի՛ զլքեալս քեզ մար-  
մին և անդամ թողուլ ՚ի կո-  
խումս և ՚ի կատականա չա-  
րին . այլ գթա ՚ի քո արա-  
րածս արարչական սիրով .  
Տէր ողորմեա մեզ , զի ՚ի թաչ  
քո պարծելով պարծեցաք , և  
պահելով պահեցեցէ զմեզ յե-  
րեւելի և յաներեւոյթ թըշ-  
նամուոյն . և լիցի պահապան  
ծառայիս Սատուծոյ , ամէն :

Չար իշխանքն հալածին ,  
Որք ընդ ծառայս քո մարտնչին .  
Երեւելով նշան խաչին ,  
Աներեւոյթք կործանեցին :




ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՍ

ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Եւ մինչդեռ անցանէր ընդ  
այն Յիսուս, զհետ եղեն նո-  
րա կոյրք երկու. աղաղակէին  
և ասէին. Ողորմեաց մեզ  
որդի Դաւթի: Եւ իբրև եկն  
'ի տուն, մատեան առ նա կոյր-  
քն և ասէ ցնոսա Յիսուս.  
Հաւատայք եթէ կարող եմ  
առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝  
Այո, Տէր: Յայնժամ մերձե-  
ցաւ յաչս նոցա՝ և ասէ. Ըստ  
հաւատոց ձերոց եղիցի ձեզ:  
Եւ բացան աչք նոցա. և  
սաստեաց նոցա Յիսուս՝ և



ասէ . Զգոյշ կացէք , մի՛ ոք  
գիտասցէ : Եւ նոքա ելեալ  
համբաւեցին զնա ընդ ամե-  
նայն երկիրն ընդ այն : Եւ յե-  
լանե զնոցա արտաքս , ահա  
մատուցին առ նա այր մի հա-  
մբր դիւահար : Եւ յելանե զն  
դիւին՝ խօսեցաւ համրն . և  
զարմայան ժողովուրդքն և  
ասեն թէ և ոչ երբէք երե-  
ւեցաւ այսպիսի ինչ յիսրայէ-  
լի : Իսկ փարիսեցիքն ասէին,  
թէ իշխանաւն դիւաց հանէ  
դա զդեւս :





ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆՍ

ՈՐ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

Եւ ել լուր նորա ընդ ամե-  
նայն կողմն գալիլեացւոց : Եւ  
վաղվաղակի ելեալ 'ի Ժողովրդ-  
դենէն , եկն 'ի տուն Սիմոնի  
և Անդրեայ , Յակոբու և  
Յովհաննու հանդերձ : Եւ զո-  
րանչ Սիմոնի դնէր ջերմաց-  
եալ , վաղվաղակի ասենցնա  
վասն նորա : Եւ մատուցեալ  
յարոյց զնա , կալեալ զձե-  
ռանէ նորա , և եթող զնա  
տենդն և պաշտէր զնոսա :  
Եւ իբրև երեկոյ եղև 'ի մը-  
տանել արեգականն , բերէին



առ նա զամենայն հիւանդս  
և զգիւահարս . և էր ամե-  
նայն քաղաքն ժողովեալ առ  
դրունան : Եւ բժշկեաց բա-  
զում հիւանդս 'ի պէս պէս  
ախտից , և դեւս բազումս  
եհան , և ոչ տայր խօսել դի-  
ւացն , զի դիտէին զնա թէ  
Քրիստոսն է :





ՍՈՒՐԲ ՍԻԵՏԱՐԱՆՍ

ՈՐ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

Եւ եղև ընդ աւուրան ընդ  
այնոսիկ ել 'ի լեառն կալ յա-  
ղօթս, և հանէր զգիշերն 'ի  
գլուխ յաղօթան Սատուծոյ :  
Եւ իբրև այգ եղև՝ կոչեաց  
զաշակերտան իւր, և ընտրե-  
եաց 'ի նոցանէ երկոտասանս  
զորս և առաքեալս անուանե-  
եաց : զՍիմոն՝ զոր և Պետ-  
րոս անուանեաց, և զԱնդ-  
րէաս զեղբայր նորին, և ըզ-  
Յակոբոս և զՅովհաննէս, և  
զՓիլիպպոս և զԲարթուղի-  
մէոս : Եւ զՄատթէոս և ըզ



Թովմաս , և զՅակոբոս Ալփեայ . և զՄիսնն զկոչեցեալն նախանձայոյդ , և զՅուդա Յակոբայ , և զՅուդա Իսկարիովտացի՝ որ եղև իսկ մատնիչ : Եւ իջեալ նոքօք հանդերձ ՚ի տեղի մի տափարակ , և ժողով աշակերտացն նորա և բազմութիւն յոյժ ժողովրդեանն , յամենայն Հրէաստանէ և յԵրուսաղեմէ՝ և յայնմ կողմանէ , և ՚ի ծովերէն Տիւրոսի և Սիդոնի : Որք եկին ըսել ՚ի նմանէ , և բժշկել ՚ի հիւանդութենէ իւրեանց . և նեղեալքն յայտոց պղծոց բժշկէին : Եւ ամենայն



Ժողովուրդն խնդրէր մերձե-  
նալ 'ի նա , զի զօրութիւն  
բազում ելանէր 'ի նմանէ և  
բժշկէր զամենեսին :





ՍՈՒՐԲ ՍԻԵՏՍՐԱՆՍ

ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

Յեա այսորիկ տօն էր Հը-  
րէից , և ել Յիսուս յերուսա-  
ղէմ : Եւ էր յերուսաղէմ 'ի  
Պրոպաաիկէ աւազանին ուր  
կոչէր երրայեցերէն Բեթհեզ-  
դայ հինգ սրահ : Յորս ան-  
կեալ դնէր բազմութիւն յոյժ  
հիւանդաց , կուրաց , կաղաց  
գօսացելոյ , որք ակն ունէին  
ջրոցն յուզելոյ : Եւ հրեշտակ  
տեառն իջանէր ըստ ժամա-  
նակի յաւազանն , և յուզէր  
զջուրան . և որ նախ 'ի շար-  
ժումն ջուրոցն իջանէր յաւա-



դանն՝ բժշկէր, ոչ ունեւոյ՛ նը-  
շան հիւանդութեան : Եւ անդ  
էր այր մի, որոյ երեսուն և  
ութամ էր՝ ի հիւանդութեան  
իւրում :

Զնա իբրեւ ետեա Յիսուս՝  
զի անկեալ դնէր, և գիտաց  
եթէ բազում ժամանակք են  
այնու հետեւ, ասէ ցնա. կա-  
մի՞ս որչ լինել : Պատասխանի  
ետ նմա հիւանդն. Տէ՛ր, ոչ  
զոք ունիմ, թէ յորժամ շուր-  
քքն յուղիցին, արկցէ զիս  
յաւաղանն, և մինչ ես դան-  
դաղ իմ, այլ ոք քան զիս յա-  
ւաջագոյն իջանէ : Ասէ ցնա  
Յիսուս. Արի՛, առ զմահիճս



քո և գնա : Եւ ողջացաւ այ-  
րքն , և յարեաւ , էառ ըզ-  
մահիճս իւր և շրջէր . և էր  
շարաթ յաւուրն այնմիկ :







Դ Ա Ր Զ

ԿԻՊՐԻԱՆՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԵՍ Կիպրիանոս ծառայ Աստուծոյ, յԱնտիոք քաղաքէ, աղգաւ Հելլենացի, առն հեթանոսի որդի. անուն հօր իմոյ Եդեսիա, և մօր իմոյ Կըղոդիա. յորժամ ծնայ ես յորովայնէ մօր իմոյ, ծնողք իմ նուիրեցին զիս յուսումն դիցիւնել պաշտօնեայ կուոց, և ետուն զիս յուսումն դիտութեան, և զամենայն ուսայ զկախարդական գիրս առաւել քան զՍիմոն և զՆաքովր,



և եղէ հասու ամենայն հաս-  
րագիտութեանց . բարում  
անգամ ելանէի յօղս , և կա-  
խարդութեամբ գնայի 'ի վե-  
րայ ծովու . և էին 'ի հրամանս  
իմ ամենայն գունդք դիւայ .  
և զոր ինչ խորհէի՝ առ ժա-  
մայն կատարէր : ելանէի յա-  
պարանան , և առնէի զչաւիղս  
արեգականն և զլումնին յե-  
րեսս իմ , և երեսք իմ փայ-  
լէին իբրև զարեգակն . ես կա-  
տարէի զկամս դիւայ մեծաւ  
ուրախութեամբ , և էի մոլոր-  
եալ 'ի գործս չարութեան ,  
և ոչ ճանաչէի զՍտուած , և  
զամենայնս գայթակղեցու-



ցանէի յաղաղս չար արուես-  
տին իմոյ . զոմանս աչացաւ  
առնէի , զոմանս գլխացաւ ,  
զոմանս քամոտ , զոմանս ջերմ-  
նոտ , զոմանս հիւանդ , զո-  
մանս յաղգաց վարէի , զոմանց  
զգոյն յերեսացն շրջէի , զո-  
մանց զմիտս մոլորեցուցա-  
նէի , զոմանս ատելիս առնէի  
իւրեանց ազգին , զայր և զկին  
արկանէի ընդ միմեանս , և  
տայի նոցա ատել զմիմեանս ,  
և զայլ բազում չարիս գիւա-  
կանս առնէի 'ի վերայ երկրի .  
և այնչափ հմուտ եղէ գիւացն'  
դի ոչ մնաց գործ և ոչ խոր-  
հարդ զոր ոչ գիտացի . դի-



տացի և զբազմութիւնս դի-  
ւաց, զի որպէս ջուր որ ելա-  
նէ յաղբերաց՝ այնպէս ելա-  
նեն դեւք և պատրեն և խա-  
բեն զորդիս մարդկանս. զոր  
Տէր Աստուած հեռացուցէ  
'ի ծառայէս Աստուծոյ :

Եւ կապէի կախարդու-  
թեամբ իմով զերկինս՝ որ ոչ  
տայր զանձրեւ. զերկիր՝ որ  
ոչ բուսուցանէր զսերմանիս  
իւր. զարեգակն և զլուսին  
և զաստեղս հաստատութեան.  
զծառս՝ որ ոչ տային զպտու-  
ղբս. զծով՝ որ ոչ տայր զա-  
լիս իւր. զձկունս՝ որ ոչ լո-  
ղային 'ի ծովս. զգետս՝ որ ոչ



գնային . զաղբիւրս՝ որ ոչ  
բղխէին . զթռչունս՝ որ ոչ  
վերանային յօդս . զանասունս՝ որ ոչ յղանային .  
զյղիս՝ որ ոչ ծնանէին . զկանայս՝ որ ոչ յղանային . զեռունս՝ որ ոչ զեռային . զվատակաւորս՝ որ ոչ վատակէին . զվաճառականս՝ որ ոչ վաճառէին . զօղն՝ որ ոչ թնդայր . և կապէի զերկինս օդօքն և զերկիր ամենայն զեռնօք , որ ոչ անցանէին ընդ հրամանս իմ . հազար հարիւր եօթանասուն և երկու աղանդք կանանց և կախարդաց , և արանց աղան-



դաւորաց : Արձակ երիտա-  
սարգ մի որոյ էր անունն Ագ-  
ղաւիղոս , ցանկացաւ գեղե-  
ցիկ կուսի միում որոյ անունն  
էր Յուստիանէ՝ առնուլ զնա  
'ի կնութիւն և ոչ կարէր , և  
առաքեաց բազում պատուա-  
կան ինչս , սակի և արծաթ և  
գեղեցիկ հանդերձս , և կոյ-  
սքն ոչ հաւանեցաւ և դար-  
ձոյց անարդանօք , և առեալ  
երիտասարդն զամենայն ինչս  
զնաց առ Կիպրիանոս , և նա  
ասէ , Ես դարձուցանեմ զնա  
'ի կամս քո , և առաքեաց զմի  
'ի դիւացն առ Յուստիանէ , և  
նա սուրբ աղօթիւ քն հալա-



ծեաց զնա . և ապա առա-  
քեաց զդեւն սրունկութեան,  
և եղեալ զխին 'ի կերպա-  
րանս կնոջ պառաւոյ , և գը-  
նացեալ 'ի դռուն սուրբ կու-  
սին 'ի գիշերի և ասէ . Ո՞վ  
դուստր իմ՝ զայս գիշեր ընդ-  
քեզ կացից յաղօթս . և մքա-  
եալ դեւն առ կոյսն և կային  
յաղօթս զողջոյն գիշերն միա-  
բան . և ապա ասէ սատանայ .  
Ո՞վ դուստր , 'ի կուսութենէ  
ո՞վ իցէ վարձս ընկալեալ . Եւա-  
թէ չէր ամուսնացեալ , ուս-  
տի էին նախահարք , մարդա-  
րէք , առաքեալք , հայրա-  
պետք . եկ երթիցուք առ



մեծն Կիպրիանոս և ամուս-  
նացիր, և ապա իմացեալ կու-  
սին եթէ դիւական էր բանն,  
եհան զնշան Խաչին 'ի վերայ  
մարմնոյ իւրոյ, և կնքեաց  
զանձն, և դեւն հալածեցաւ  
և աներեւոյթ եղեւ ահիւ և  
դողուիթեամբ, և զնայ առ  
Կիպրիանոս: Եւ Կիպրիանոս  
ասէ ցդեւն, զի՞նչ իցէ զի  
երկիւղիւ դողաս և սատանիս,  
ասէ դեւն, Տեսի զնշան Խա-  
չին և երկիւղիւ դողամ և  
սատանիս: Ասէ Կիպրիանոս,  
Զի՞նչ իցէ նշան Խաչին որ  
զարհուրեցուցանէ զքեզ: Ա-  
սէ դեւն ցԿիպրիանոս: Երդ-



ուիր զի ոչ ուրանաս զձեզ,  
և ես ասեմ քեզ զամենայն  
խորհուրդս մեր և զնշան թա-  
չին: Եւ երդուաւ Կիպրիանոս  
'ի սուտ և 'ի սնտախ պաշտա-  
մունսնոցա՝ եթէ ոչ ուրանամ  
զձեզ: Եւ սկսաւ դենն պատ-  
մել մի ըստ միովէ զամենայն  
և ասէ:

Աստուած զմարդ արար 'ի  
հողոյ, զԱդամ. և ասէ, Ե-  
կայք հրեշտակք և հրեշտա-  
կապետք, երկիրպագէք ձե-  
ռագործին խնամ Ադամայ.  
այլ դասք դիւայ հպարտա-  
ցան և ոչ խոնարհեցան եր-  
կիրպագանել Ադամայ. բար-





կայալ Աստուածութիւնն և  
զերկինս պատառեաց և զդի-  
ւաց գունդս 'ի վայր ելից ,  
զանթիւ զօրս մեր . և շինե-  
ցաք ապարանս և դժոխք ան-  
ուանեցաք, և զհոգիս արդա-  
րոց և մեղաւորաց մինչեւ  
ցՅովհաննէս Մկրտիչ , զամե-  
նայն բմբունեցաք և 'ի դժո-  
խսրս ածաք : Յետոյ առա-  
քեաց Աստուած զՈրդին իւր





Միածին՝ որ եկն և ծնաւ 'ի  
սուրբ կուսէն Մարիամայ Սատ-  
ուածածնէն, զմեռեալս յա-  
րոյց, զբորոտս սրբեաց, ըզ-  
կաղս գնացոյց, զկուրս լու-  
սաւորեաց, և զայլ բազում  
սքանչելիս արար. մատնեցաւ





'ի Յուդայէ և խաչեցաւ 'ի Հը-  
րէից , և թաղեցաւ և յար-  
եաւ 'ի մեռելոց , և Խաչիւն  
իւրով զդժոխս աւերեաց և  
համբարձաւ առ Հայր յերկի-  
նքս , և դարոց է միւսանդամ  
դատել զկենդանիս և զմեռ-  
եալս , և Խաչիւն իւրով լու-  
սաւորէ զամենայն արարածս :



Հաւատացեալքն ուրախ լինին  
և ուրացողք կօծեացին :



Այս է նշան թաշին զոր տե-  
սանեմք և զարհուրիմք և սու-  
կամք . և ապա Կիպրիանոս 'ի  
միտս իւր եկեալ ասէ . Եթէ  
նշան թաշին այդչափ զօրու-  
թիւն ունիցի , ապա թաշեանն  
ո՞րչափ ևս առաւել :

Ես հաւատամ 'ի Քրիստոս ,  
և 'ի զօրութիւն թաշին , և



Մատուած Հայր ամենակալ՝  
դի նա միայն է ճշմարիտ Մա-  
տուած, և կուռքն դեւք են  
և սատանայ: Եւ ապա այրեաց  
դամենայն դիրս կախարդու-  
թեան իւրոյ, գնաց առ Ե-  
պիսկոպոս քաղաքին, և մը-  
կրտեցաւ և ձեռնադրեցաւ  
քահանայ, և զկնի աւուրոյ՝  
Եպիսկոպոս, և աղօթս արար  
և ասէ. Տէր Մատուած իմ,  
սիրեցի զքեզ և ծանեայ ՚ի  
ձեռն սուրբ հայրապետին  
Մատթէոսի և Յուստիանեայ  
կուսին զդօրութիւն Խաչի քո.  
ողորմած Մատուած, ողորմեաց  
ինձ որպէս աւաղակին, քաւ-



եա զիս որպէս զԶաքէոսն .  
արդարացո զիս որպէս զմաք-  
սաւորն . հան զիս 'ի գբոյ մե-  
ղաց որպէս զԵրեմիա և զԻա-  
նիէլ 'ի գբոյ բանախն . շիջո  
յինէն զբռնութիւն թշնամ-  
ւոյն՝ որպէս զհուր երկոց ման-  
կանց 'ի Բաբելոնի հողմաբեր  
ցողոմն օրհնութեան :

Եւ զոր յառաջն կապէի չար  
և դիւական աղանդօք , այ-  
ժբմարձակեալ եմ զամենայն  
կապեալսն հրամանաւն Աս-  
տուծոյ . կացցեն երկինք և  
երկիր 'ի հաստատութեան  
իւրեանց . հող զբոյս դալար  
բուսուցէ . ծառք զպտուղս



խընանց տայեն , և զամե-  
նայն կապեալքն արձակումն  
առցեն յանուն Սմենասուրբ  
Երրորդութեանն Սատուծոյ :  
Երդ մնեցուցանեմ զքեզ ,  
սատանայ , անուամբն Սատու-  
ծոյ Յիսուսի Քրիստոսի Տեա-  
ռքն մերոյ , և 'ի հազար և մի  
անունն Սատուծոյ , որ զԱդա-  
մքն և զԵւա բազկացոյց , և  
զինն դասս հրեշտակաց՝ որ  
եղանեն և իջանեն յԱպրիպո-  
լիս քաղաք , և յանուն սե-  
րովբէից՝ որ կան 'ի սպասա-  
ւորութիւն Որդւոյն Սատու-  
ծոյ , և սքողերով ծածկեն զե-  
րեսս իւրեանց և երգեն ,



Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր  
զօրութեանց, լի են երկինք  
և երկիր փառօք քո :

Երդ մնեցուցանեմ զձեզ,  
զեւք շարք և որդիք սատա-  
նայի, որ էք օգնական ամե-  
նայն կախարդաց և շարադոր-  
ծաց, երդ մնեցուցանեմ զձեզ  
զեւք 'ի գեղեցկութիւն Ա-  
դամայ, 'ի վայելչութիւն դը-  
րախտին, 'ի խոնարհութիւն  
ամենայն սրբոց, և 'ի սէր ա-  
մենայն մարտիրոսաց, 'ի պա-  
տարագն Աբելի 'ի կոչել զա-  
նուն տեառն Ենովսայ, յար-  
դարութիւն Նոյի, 'ի քահա-  
նայութիւն Մելքիսեղեկի, 'ի



Հաւատս և հիւրընկալութիւն  
Աբրահամու, 'ի կապանան Սա-  
հակայ, 'ի պատրանն Յակով-  
բայ, 'ի գեղեցկութիւն Յով-  
սեփայ, 'ի համբարձումն Ե-  
ղիայի, 'ի հնազանդութիւն  
Եղիսէի, 'ի տախտակն Մով-  
սիսի, 'ի պատմութեանն Ահա-  
րոմի, որ զարդարեալն էր  
Երկոտաասան ակամբք, որ օ-  
րինակ էին Երկոտաասան Առա-  
քելոցն Քրիստոսի. 'ի քնարն  
և 'ի Սաղմոսն Դաւթի, 'ի մա-  
տանին Սողոմոնի, 'ի գաւա-  
զանն Մովսիսի, և յաղօթան  
Ահարոմի, յաւեախան Դար-  
բիէլի զոր ետ սուրբ կուսին



Մարիամու . 'ի ծնունդն և 'ի  
մկրտութիւնն Յիսուսի Քրիս-  
տոսի որ մկրտեցաւ 'ի Յորդա-  
նան 'ի Յովհաննէ , և 'ի սուրբ  
հրամանոն որ հրամայեցին  
անդամալուծին թէ՛ արի , առ  
զմահիճս քո , և 'ի թուքն որ  
երայ զաչս կուրին , և 'ի դա-  
լուստն յաւանակաւ յերու-  
սաղէմ , 'ի յարութիւնն Ղա-  
զարու , 'ի մատնումն և 'ի խա-  
չելութիւն Քրիստոսի , 'ի դե-  
ղարդն և 'ի բեւեռն Քրիստո-  
սի , 'ի փշեղէն պատկն և 'ի  
հեղումն արեան Որդւոյն Աս-  
տուծոյ որ հեղաւ 'ի վերայ  
սուրբ Խաչին :



Երդ մնեցուցանեմ և կապեմ  
և հալածեմ զձեզ դեւք չարք,  
յարութեամբն և համբարձ-  
մամբն Քրիստոսի, և ՚ի գա-  
լուսա Հոգւոյն սրբոյ, և այ-  
լակերպութեամբն Քրիստոսի  
որ այլակերպեցաւ ՚ի թափոր  
լերինն. ոչ ունիմք իշխանու-  
թիւնք դեւք և աղանդք և  
կախարդութիւնք արանց և  
կանանց մերձենալ ՚ի ծառայս  
Աստուծոյ :

Երդ մնեցուցանեմ զձեզ ՚ի  
բանն անապառ, ՚ի լոյսն ան-  
ճառ, ՚ի թագն անպատում  
որ հրեշտակացն զարհուրելի,  
՚ի թագաւորն սոսկալի, ՚ի



մատանին Սողոմոնի , 'ի կա-  
պանան պղնձիս , 'ի տախտակն  
Մովսիսի՝ գրեալ մատամբն  
Աստուծոյ , յաղօթան Ահա-  
րովնի , 'ի պատմութեանն ցան-  
կալի , 'ի սուրբն Սինայ , 'ի  
քառանսօրեայ պահս Մովսի-  
սի , 'ի սուրբ արիւն մանկանցն  
Բեթլէհեմի , յարդարութիւն  
Նոյի , 'ի հաւատս Ղովտայ ,  
'ի կարգն Մելքիսեդեկի , յա-  
ւետիան Գաբրիէլի , յաթուն  
չորեքուսի՝ որոյ մի կողմն  
մարդոյ էր նման իմաստնոյ  
և բանաւորի , մին 'ի կերպա-  
րանս էր առիւծու՝ որոյ տե-  
սիլն հուր կիզելի , մին ահեղ



և սքանչելի և զտեսիլ հրեղէն  
եղին ունէր, միւսն ունէր ըզ  
թեւ արծւոյ տհաւոր տես  
լեամբ քան զամենայն և զար  
մանալի, որոյ վերայ նստեալ  
բազմէր Տէրն և Սատուած ա  
մենայնի. ուր այս անուանք  
սուրբք յիշեացին, գիրք և  
հրամանք պատահին, չարն 'ի  
բայ միշտ հալածի, կապանք  
և յուռութք լուծանին 'ի ծա  
ռայից Սատուծոյ. ամէն :

Յոյց մեզ Տէր զողորմութիւ  
նքս քո, և զփրկութիւնս քո  
տուր մեզ :

Որպէս զի մեծ են գործք  
քո Տէր, և յոյժ խոր են խոր  
հուրդք քո :



Երանելոյն Յովհաննու Գառնեցւոյ  
ասացեալ առ սուրբ Աստուածածինն :

**Ա**ՍՏՈՒԱՅԱՅԻՆ մայր Քրիստոսի  
և ծնող միածնի Հօր . բար-  
ձող անիծից և պարծանք  
ազդի մարդկան : Յերկնային  
ղօրայն երանեալ և հողեղի-  
նայս օրհնաբանեալ միջնորդ  
Աստուծոյ և մարդկան , հաշ-  
տարար բնդ արարածս . թագ  
և պսակ կուսից և համարձակ  
բարեխօս վասն մեղաւորաց :  
Մեղուցեալս ամենայնի ան-  
կանխմ առաջի քո , և աղա-  
չեմ դքեղ իբրև դնոյն ինքն  
զմարմնացեալն 'ի քէն . բա-



րեխօսեա վասն իմ առ բանն  
Աստուած զոր ծնար մարմնով.  
զոր կերակրեցեր զկերակրիչն  
ամենայն կենդանեաց :

Աղաչեա վասն մեր զանդ-  
րանիկդ քո : Կաց կանդուն  
առաջինորա ցուցմամբ սուրբ  
ստեանցդ : Կացո առաջինո-  
րա միջնորդ և բարեխօս բզ  
մանկութիւն իւր . զկաթամբ  
անանելն որպէս մանուկ . զու-  
սովդ բառնիլն . զգրկօք գրդ-  
ուիլն . զշրթամբք համբու-  
րիլն . զողջագուրիլն որպէս  
տղայ . զերթ և զեկն քո բնդ  
նմա յեգիպտոս և ՚ի նաղա-  
րէթ և յամենայն տեղիս . բզ



տրամութեամբ տաղնապիլն  
քո վասն նորա 'ի ժամ չար-  
չարանացն . զյանձնարարու-  
թիւն քո առ Յովհաննէս, յոր-  
ժամ հեղուսեալ կայր վշտօք  
'ի վերայ Խաչին . զդառն ար-  
տասունն քո զոր վտակօրէն  
հեղուիր յորժամ տեսանէիր  
զնա վտանգեալ 'ի վերայ Խա-  
չին . վասն որոյ մատնատա-  
տան տառապէիր կակծակոծ ,  
վասն չարչարանացն . վասն  
սաստիկ ծարաւմանն . վասն  
ճաշակման լեղւոյն՝ քացա-  
լսին . վասն տեսանելոյն ըզ-  
քրանատեսակ արեան իջումն .  
վասն իջուցանելոյն 'ի Խաչէն



արիւնազան մարմնովն . վասն  
դիազարդեալ գնելոյն 'ի  
սուրբ գերեզմանն :

Աղաչեմ զքեզ մայր լուսոյ .  
հայցեա զթողութիւն մեղա-  
ւորիս : Իիր աղերս առաջինո-  
րա զամենակիրս չարչարա-  
նաց իւրոց , զոր վասն իմ կրք-  
եաց բարերարն և մարդասէ-  
րքն : Յիշեցո սուրբ կոյս զայս-  
քան չարչարանացն , զի թեր-  
եւս ողորմեսցի և ներեսցէ  
բազմամեղիս , և ջնջեսցէ ըզ-  
ձեռագիր իմոց յանցանաց :  
Եւ իւր անմեղ մատամբն և  
սուրբ արեամբն դրոշմեսցէ  
զգերեալս 'ի դպրութիւն կե-



նայն անվախճանից ընդ ա-  
մենայն սուրբս իւր :  
Եւ քեզ երկրպագութիւն  
'ի մեզուցեալ ոգւոյս , ամե-  
նասուրբ կոյս , բարեխօս լեր  
Ժառայիս Աստուծոյ . ամէն :





Ա Ղ Օ Թ Ք

Երանելոյն Յովհաննու Գառնեցւոյ  
վասն Ճանապարհի :

**Ա**ՌԱԶՆՈՐԴ կենաց Ճանապարհ  
ճշմարտութեան տէր մեր Յի-  
սուս Քրիստոս : Որ առաջնոր-  
դեցեր Յովսեփայ յԵզրպատոս ,  
և Իսրայէլացւոյ ընդ ծովս  
կարմիր , և Մովսիսի՛ի լեառն  
Սինէական , և ժողովրդեանն  
յերկիր պարգեւացն , և Կղէ-  
ովպասացն Ճանապարհակից  
եղեր յԵմմաւուս :

Աղաչեմ զքեզ Տէր , առաջ-  
նորդեա ինձ և եղբարց իմոց  
զնայ խաղաղութեամբ զառա-  
ջիկայ ընթացս . փրկեա յե-



բեւեղի և յաներեւոյթ թըշ-  
նամուոյն , և բարի առաջնոր-  
դեա 'ի դէմ եդեալ 'ի տեղին .  
զի դու ես ճանապարհ և ճըշ-  
մարտութիւն և կեանք մեր  
և քեզ փառք և երկրպագու-  
թիւն այժմ և միշտ և յաւի-  
տեանս յաւիտենից :





# Ա Ղ Ե Ր Ս

Վ Ա Ս Ն Զ Ա Ի Ա Կ Ծ Ն Ա Ն Ե Լ Ո Յ

ԱՍՏՈՒԱՅ քոչորից, անճառ  
մեծութիւն, հզօր զօրութիւն,  
ամենակարող բարեբարու-  
թիւն: Առ քեզ հայի ամե-  
նայն ակն տեսողի: Նայեաց  
ի պաղատանս հառաչման  
ձայնի քոյոց ծառայից և ա-  
ղախնեաց, որպէս Աննայի լը-  
ւար հեծութեան, և ետուր  
նմա զմեծն Սամուէլ, և Յո-  
վակիմայ և Աննայի զամենօրհ-  
նեան Մարիամ, և Զաքարի-  
այի և Եղիսաբեթի պարգե-  
ւեցեր զաւակ զսուրբ Կարա-



պետն և զՄկրտիչն Յովհանն-  
նէս : Նոյն ողորմութեամբդ  
քո պարգեւեա և տուր սո-  
ցա զաւակ բարի ծառայիս  
Աստուծոյ . ամէն :

Չայն բարբառոյ յանապատի ,  
Սուրբ Յովհաննէս դու ամլորդի .  
Անմեղ դառինն անարատի ,  
Վկայ եղեր դու կրկնակի :

Բարեխօսութեամբ արբոյ  
մարդարէիցն Մովսիսի և Ա-  
հարոմի , Նաթանայ և Սա-  
մուէլի , Իսաթի , Ամուլսայ , Մի-  
քիասայ , Աբդիասայ , Յովնա-  
նու , Նաում բնդ Ամբակումի ,  
Սորոնիայ և Անդէի , Մաղա-  
քիայ բնդ Իանիէլի , Չաքա-



ըիա ընդ Եղեկիելի, և ա-  
մենայն սրբոց դատու, պա-  
հապան լիցին ծառայիս Աս-  
տուծոյ. ամէն :





# Ս. Ղ. Ե Ր Ս

ԱՌ՝ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ  
ՆԱԽԱՎԿԱՅՆ

Ի քէն հայցեմք արտասուագին .  
Նախավկայ Տեառն արարչին .  
Սուրբ Ստեփաննոս բացող երկնին .  
Տեսող զՅիսուս յաջմէ ծնողին .  
Լեր բարեխօս արեամբ քոյին .  
Տալ մեզ հանգիստ 'ի յանկողնին .  
Արժուն լինել յառաւօտին .  
Բարեբանել զլոյսն անքննին :





Ա Ղ Օ Թ Ք

ԶՕՐԱԽՈՐ ԱՌ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐԱ

ԱՆՆ, անմահ արարչին ըս-  
պասաւորք անմարմինք՝ վե-  
րին զօրացն դասապետու-  
թիւնք : Աթոռք, Քերովբէք  
և Սերովբէք, Տէրութիւնք,  
Զօրութիւնք եւ իշխանու-  
թիւնք, Պետութիւնք, Հրեշ-  
տակապետք և Հրեշտակք,  
Միքայէլ և Գաբրիէլ, Պետք  
վերնական զօրացն դասուց-  
որք անլուելի ձայնիւ փառա-  
բանութիւն մատուցանէք Ա-  
մենասուրբ Երրորդութեանն,  
և երեքսրբեան ձայնիւ եղա-



նակէք զերգս ասելով, ողոր-  
մեա դու ասեղծեր մի՛ կո-  
րուսաներ. զգործս ձեռաց  
քոց մի՛ անտես առներ. օգ-  
նական և սրահասկան լերուք  
ծառայիս Աստուծոյ. ամէն :





Ա Ղ Օ Թ Ք

ԱՌՍՈՒՐԻ ԶԻՆԱԻՈՐԾ ՔՐԻՍՏՈՍԻ

ԲԱՐԵՆՈՍՈՒԹԵԱՄԸ սուրբ զօրա-  
 վարացն, սրբոյն Սարգսի զօ-  
 րավարին և որդւոյնորա Մար-  
 տիրոսին, և սրբոյն Թէոդո-  
 րոսի զօրավարին, Գէորգայ  
 զօրավարին և Մերկերիոսի  
 զինաւորին, Անդրէի զօրա-  
 վարին, և չորից զինաւորացն՝  
 Բաստի Եւսեբի Եւտիքի և  
 Բասիլիդեայ, սրբոյն Մինա-  
 սայ, Երմոզինեայ և Գրաբո-  
 սի, և սրբոց Ատոփեանց,  
 Ոսկեանց և Սուքիասանց, Խա-  
 ռիթեանց, և այլ ամենայն  
 սրբոց բարեխօսութեամբն  
 պահեա զԺառայս քո, ամէն:



Ա Ղ Օ Թ Ք

Վ Ա Ս Ն Ա Կ Ա Ն Չ Ս Ր Ի Ե Ի Լ Ե Զ Ո Ւ Ի Չ Ս Ր Ի

ՏԵՐ Աստուած մարդասէր ,  
մարդասիրի հօր որդի , դու  
ես պահապանս և օգնականս  
յուսացելոցս 'ի քեզ ողորմու-  
թեամբ քո 'ի ծառայս , եւ  
պահեա անսիրձ 'ի չարէ եւ  
անսայթաք յորոգայթէ երե-  
ւելի և աներեւոյթ թշնամ-  
ւոյն . պահեա 'ի չար աչաց և  
'ի չար լեզուէ . 'ի սրոյ և յա-  
մենայն հարուածոց երեւել-  
եաց և աներեւութից պահ-  
եա դժառայս քո . ամէն :



Ա Ղ Օ Թ Ք

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ

Ա<sup>Ղ.Ա.ՁԵԾ</sup> զքեզ Գրիառոս փրկ-  
կիչ աշխարհի. հայեա յիս և  
ողորմեա և շնորհեա ներուամս  
բազում անօրէնութեան իմոյ .  
քանզի անարգեցի զամենայն  
բարիան զոր արարեր յիս 'ի  
մանկութենէ իմմէ. զի զարխ-  
մարս և անիմաստս արարեր  
անօթ զխտութեան :

Յաճախեաց յիս զշնորհս քո,  
և լցոյց զքաղց իմ և զծարսու  
իմ զովացոյց, և լուսաւոր-  
եաց զխաւարեալ միտս իմ,  
և ժողովեաց 'ի մոլորութենէ  
զխորհուրդս իմ և ելից 'ի



ծոց իմ, վասն որոյ անկեալ  
երկիրպագ անեմ առաջի քո՝  
խոստովան եղեալ զբարերա-  
րութենէ քումսմէ, և աղա-  
չեմ դադարեցո առ իս զխոս-  
տումն շնորհի քո, և պահ-  
եա զնա 'ի դանձի քում. զի  
դարձեալ տացես ինձ զնա  
յաւուրն յայնմիկ: Մի բար-  
կանար ինձ մարդասէր զի ոչ  
հանդուրժեմ սպառնալեաց  
քոյ. յաղագս որոյ և աղա-  
չեմ ժտելով, զի առաւել քան  
զչափն յաճախեաց յիս շնորհն  
քո. վասն զի և լեզու իմ տը-  
կարացաւ ոչ կարելով խօսել  
զնմանէ, հիացան և միտք



իմ ոչ բերելով զբազմութիւն  
 ալեաց նորա: Կերպարանք  
 և ճառագայթ օրհնելոյ հօրդ,  
 դադարեցո առ իս 'ի հոսա-  
 նաց նորա. զի իբրեւ զհուր  
 բորբոքեալ բոցակիզեացէ զե-  
 ռիկամունս իմ և զսիրտ իմ.  
 և անդր դարձեալ պարգեւ-  
 եա ինձ զնա և կեցո զիս յար-  
 քայութեան քում. մի յիշեր  
 զանօրէնութիւնս իմ. յան-  
 դբզնիմ և հայցեմ. տուր ինձ  
 զխնդրուածս իմ, և արա առ  
 իս օթեւան օրհնեալ հարբ  
 քով յաւուր յայտնութեան  
 քո. շնորհեա ինձ, Քրիստոս,  
 զհայցուածս իմ, զի դու միայն



Ես տուիչ կենաց խնոց , և  
քեզ ընդ Հօր հոգւովն սրբ-  
բով փառք այժմ և յաւիտ-  
եանս . ամէն :





Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

ԱՌ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԻՈՐԻԶՆ ՄԵՐ

ԼՈՒՍԱԻՈՐԻԶ հայր պարծանաց,  
բնկալ զբանս զայս մաղթա-  
նաց. և աղաչեա զհայրն փա-  
ռաց, ջնջել զգիր մեր յան-  
ցանաց: Այլ և բարեխօսու-  
թեամբ երեք հարիւր ութ և  
տասն հայրապետացն և ուղ-  
ղափառ եպիսկոպոսացն ա-  
ղօթիւք պահեա տէր Աստ-  
ուած զժառայս քո. ամէն:





Ա Ղ Օ Թ Ք

ԱՌ ԴՐԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՍՐԲՈՅ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

ՏՍԱՐ Աստուծոյ և բնակա-  
րան սուրբ հոգւոյն, 'ի քէն  
սուրբ աւագանսն կոչեաց  
յորդեգրութիւն հօրն երկ-  
նաւորի: Այսօր 'ի քեզ կազ-  
մեցաւ պատարագել գառն  
անարատ: Եւ ես գիտեալ ե-  
կի առ դուրս քո, և աղա-  
չեմ գ.քեզ, մաքրեա զիս վե-  
րբատին լուացմամբ, և սրբեա  
'ի մեղաց և արա արժանի մը-  
տանել առաջի սրբոյ սեղա-  
նոյդ յերկրպագութիւն:



## Բ Ա Ն

Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն ընդդի-  
մամարտ դիւաց այս նուագ աղօթից  
և դիւասարսուռ ջերմնատաղնապ ախ-  
տաւորութեանց Աստուծով փարատիչ :

Ա՛ր՛ արքանեաց անբաւից  
հրաչից հանդերձիչ Հայր ա-  
մենաստեղծ : Անունդ ահա-  
ւոր , ձայն սարսափելի , կո-  
չումն ընտանի , բան համբու-  
րելի , ազդումն սքանչելի ,  
հրաման սոսկալի , էութիւն  
անքննելի , գոյութիւն անճա-  
ռելի , իսկութիւն անբաւելի ,  
զօրութիւն անդննելի , կամք  
ամենարարի , տէրութիւն ան-  
սահմանելի , մեծութիւն ան-



չափելի , բարձրութիւն ան-  
բովանդակելի , որ քանութիւն  
անկշռելի , առաւելութիւն  
անհասանելի , պատճառ որդ-  
ւոյ հայրութեամբ այլ ոչ նա-  
խագրութեամբ :

Քեւ և 'ի ձեռն քոյդ ան-  
պարագիր զօրութեանդ սաս-  
տեա տազնապող և դիւա-  
կան տենդիս ջերմութեան ,  
որ սպրդեալ մուծաւ բնդ մե-  
ղաց , զի փախիցէ 'ի մարդոյս  
զարհուրեալ 'ի սխրալի և յամ-  
բաւելի արեանդ վտակի դա-  
ռինդ երկնաւորի , որով սբրս-  
կեալ միանգամ 'ի մշտնջենա-  
ւորս համայն մաքրեցաք :



Եւ արդ՝ յայս պատկառելի  
խոնարհութենէ արարչակեր-  
տքս խորհրդոյ՝ ամաչեսցէ սա-  
տանայ ՚ի դործս չարեաց  
իւրոցն հրեշտակաց: Տանչեւ-  
ցի և հալածեսցի, հեռացեալ  
և արտաքս առաքեալ ՚ի շին-  
ուածոյ խորանէ քումդ բնա-  
կութենէ յարտաքին խաւարն:  
Եւ ջնջեալ մաքրեա զարտա-  
սուս ողբոց ՚ի դիմաց մերոց .  
և զհառաչումն ձայնի հեծու-  
թեան ՚ի սրտից մերոց: Եւ  
յիշատակաւ հարման հեղու-  
սից, քստմնափուշ, տաժա-  
նատեսիլ ոգեպահանջից, ո-  
րով պնդեցաւ միածինդ քո



յաշտարակ Խաչին, ցաւեսցի  
չարին: Եւ 'ի կողահերձ սայ-  
րասուր սլաքէ ուժգին բաղխ-  
մանէ՝ որով զվէրն մեծ բնկա-  
լաւ, իսպառ սատակեսցի  
սկզբնարարն մահու: Եւ զի  
խոնարհեցոյց զգովեալն գը-  
լուխ յաւանդելն զհոգին 'ի  
ծոց քո բարձրեալ, ապստամ-  
բութիւն անբարի բարուցն  
բելիարայ 'ի կոր կործանեսցի  
յամենայնիւ հերքեալ 'ի կո-  
րուստ: Եւ զի զօղեալ ծած-  
կեցաւ անմահն իսկութիւն  
յորովայնի երկրի, այսու ամ-  
բարձեալն հսկարտութիւն  
կարծեալ գողողին 'ի յատա-



կրս մահու դժոխաց մթին  
ստուերին յառեալ դիտեսցէ :  
Եւ յիշեսցէ զառաջին հար-  
ուածն անբժշկական , որով  
մահացու դիմամարտութիւն  
թունից վիշապին՝ կենարարն  
կրիւք ամենազօրին : Վասն զի  
'ի փառս քո հայր ողորմու-  
թեան իբր 'ի գովեստ որդւոյ  
քո հոգւովդ սրբով զայս խոս-  
տովանիմք : Քանզի ոչ պի-  
տակ ինչ սոսկ զօրութիւն ու-  
նի զմիւսմէն՝ առ մի խորհր-  
դականն խորութիւն : Այլ  
զանակիզքն բանդ անցաւոր  
քնդ ժամանակդ հօր փառա-  
ւորեմք : Եւ քեզ միայնոյ



սուրբ Երրորդութեանդ , հա-  
ւասարապատիւ տէրութեա-  
նրդ համաբուն անբաժին ինք-  
նութեանդ , օրհնաբանու-  
թիւն՝ գոհութիւն՝ զօրու-  
թիւն՝ և անճառ վայելչու-  
թիւն մեծութեան՝ բարեմի-  
ճակ հարթութեան՝ զուգա-  
կշիռ հաւասարութեան յա-  
ւիտեանս . ամէն :





Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅՆ  
ԶՕՐԱԻՈՐ ԸՆԴԴԷՄ ԱՄԵՆԱՅՆ  
ԶԱՐԵԱՑ

ԲԱՆ ԺԲ.

ԸՆԿԱՆ, քաղցրութեամբ, տէր  
Աստուած հզօր, զդառնացու-  
ղիս զաղաչանս: Մատիւր գը-  
թութեամբ առ պատկառեա-  
լըս դիմօք: Փարատեա, ամե-  
նապարգեւ, զամօթական  
տխրութիւնս: Բարձ յինէն,  
ողորմած, զամբերելի ծան-  
րութիւնս: Անջրպետեա, հը-  
նարաւոր, զմահացու կրթու-  
թիւնս: Աւարեա, միշտ յաղ-  
թող, զխաբողին հաճութիւնս:



Բացադրեա , վերնային , զմու-  
լելոյն մառախուղ : Կնքեա ,  
կեցուցիչ , զկորուսչին ըն-  
թացմունս : Տրուեա , ծած-  
կատեա , զբմբունողին չար դքտ-  
մունս : Խորտակեա , անքրն-  
նին , զմարտողին դիմեցմունս :  
Տեառնագրեա քո անուամբդ  
զլուսանցոյց երդ յարկիս :  
Պարփակեա քո ձեռամբդ զա-  
ռաստաղ տաճարիս : Գծա-  
գրեա քո արեամբդ զմուտ  
սեմոց սենեկիս : Կերպացո  
զքո նշանդ 'ի հետս ելից մաղ-  
թողիս : Ամրացո քո աջովդ  
զհանգստեանս խշտիս : Մաք-  
րեացեա 'ի յաղբից զծածկա-



րան անկողնոյս : Պահեցես  
քո կամօքդ զտառապեալ ան-  
ձքն ոգւոյս : Անխարդախ ա-  
րասցես զքո շնորհեալ շունչ  
մարմնոյս : Կացուցես շրջա-  
փակ զպար զօրուդ երկնայնոյ :  
Կարգեցես 'ի դիմի բնդ-  
դէմ դիւացն դասու : Տուր  
հանգիստ բերկրութեան, մա-  
հահանգոյնս նիրհման 'ի խո-  
րութեան գիշերիս : Բարեխօ-  
սութեամբ հայցուածոց սրբ-  
բոյ Աստուածածնիդ և ամե-  
նայն բնարեւոյց : Ամփոփեալ  
պարուրեա զպատուհան տե-  
սութեանց, զգայարանացս ի-  
մաստից, անզարհուրելի զե-



տեղմամբ , 'ի ծփական խռու-  
վութեանց , կենցաղական բզ-  
բաղմանց , անբշական երա-  
զոց , խողականաց ցնորից : Յի-  
շատակաւ քո յուսոյդ անվը-  
նասելի պաշտպանեալ , և բա-  
թափեալ վերստին 'ի ննջմանէ  
ծանրութեանց , ամենազգաստ  
արթնութեամբ , հոգենորոգ  
զուարթութեամբ 'ի քեզ ար-  
ձանացեալ՝ զայս ձայն մաղ-  
թանաց բուրմամբ հաւատոց ,  
քեզ ամենօրհնեալ թագաւոր  
փառաց անճառից , փառա-  
բանողաց երկնագունմար խըմ-  
բից երգակցեալ՝ յերկինս ա-  
ռաքել : Զի դու փառաւոր-



Եալ ես յամենայն արարածոց  
յաւիտեանս յաւիտենից, ա-  
մէն :





Ա Ղ Օ Թ Ք

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅՆ  
ԲԱՆ ԽԱ.

ՈՐԻ Սասունի կենդանույ  
օրհնեալ յամենայնի, հօրդ  
ահաւորի անքննին ծնունդ,  
որ տկարանայ առ 'ի քէն և  
ոչ ինչ, որ 'ի ծագել անբատ  
ուեր նշուլից ողորմութեան  
քո փառաց՝ հալին մեղք,  
հալածին դեւք, ջնջին յան-  
ցանք, խղին կապանք, խորտա-  
կին շղթայք, կենդանածնին  
մահացեալք, բժշկին հար-  
ուածք, ողջանան վէրք, բառ-  
նին ապականութիւնք, տեղի  
տան տխրութիւնք, նահան-



Ղին հեծութիւնք , փախնու  
խաւարն , մեկնի մէգն , մեր-  
ժի մառախուղն , փարատի մը-  
ռայն , սպառի աղջամուղն ,  
վերանայ մութն , գնայ գի-  
շերն , տարագրի տագնապն ,  
չքանան չարիքն , հալածին  
յուսահատութիւնքն , և թա-  
գաւորէ ձեռն քո ամենակար ,  
քաւիչդ ամենայնի : Որ ոչ ե-  
կիր կորուսանել զմարդկան  
ոգիս , այլ կեցուցանել : Թող  
ինձ զանթիւ չարիսն իմ բա-  
զում ողորմութեամբդ , զի  
դու միայն ես յերկնի ան-  
ճառ , և յերկրի անզննին , 'ի  
տարր քոյի , և յեզրս ծա-



գաց աշխարհի, սկիզբն ամե-  
նայնի և յամենայնի ամենայն  
լրմամբ, օրհնեալ 'ի բարձու-  
նքս: Եւ քեզ ընդ Հօր և  
Հոգւոյդ սրբոյ. փառք յաւի-  
տեանս, ամէն:





Ա Ղ Օ Թ Ք

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆՍՐԵԿԱՑԻՈՅՆ

ԲՄՆ ԶԴ.

**Ա**ՍՏՈՒԱԾ յաւիտենական, բա-  
րերար և ամենակալ, ստեղ-  
ծիչ լուսոյ և յօրինիչ գիշե-  
րոյ, կեանք 'ի մահու և լոյս  
'ի խաւարի, յոյս ակն ունո-  
ղաց և երկայնամտութիւն տա-  
րակուսելոց: Որ ամենար-  
ուեստ իմաստութեամբ քո  
դարձուցանես յայդ զատուե-  
րքս մահու, աննուաղ ծագու-  
մբն և անմուտ արեգակն.  
Քանզի ոչ զօրէ ծածկել զփա-  
ռքս ատրութեան քոյ խաւար  
գիշերոյ: Որում կրկնի ծունր



երկրպագութեան ամենայն  
եղելոց երկնաւորաց և երկ-  
րաւորաց և սանդարամետա-  
կանաց : Որ լսես զհեծութիւն  
կապելոց և հայիս յաղօթս  
խոնարհաց և ընդունիս ըզ-  
խնդրուածս նոցա , Աստուած  
իմ և թագաւոր իմ , կեանք  
իմ և ապաւէն իմ , յոյս իմ  
և վատահութիւն իմ , Յիսուս  
Քրիստոս Աստուածդ ամե-  
նայնի , սուրբդ հանգուցեալ  
'ի հոգիս սրբոց , մխիթարու-  
թիւն վշտաց և քաւարան մե-  
ղուցելոց , որ գիտես զամե-  
նայն յառաջ քան զլինել նո-  
ցա . առաքեա զպահպանո-



դական զօրութիւն աջոյ քո  
և փրկեա զիս յերկիւղէ գի-  
շերի և 'ի դիւէ շարէ : Որպէս  
զի զյիշատակ սոսկալի և  
սուրբ քո անուանող միշտ համ-  
բուրեալ շրթամբք հոգւոյ  
բղձութեան շնչոյ , կեցից  
պահպանեալ ընդ այնտիկ՝  
որք կարդան զքեզ 'ի բոլոր  
սրտէ : Եւ 'ի դրոշմէ Խաչի  
քոյոյ նշանիդ , զոր աստուա-  
ծային արեամբ քո ներկեալ  
նորոգեցեր , և 'ի նոյն շնորհ  
որդեգրութեան զմեզ մկրտե-  
ցեր , և 'ի փառս պատկերի  
քո նկարեալ յօրինեցեր , այ-  
սու պարգեւօք աստուածա-



կանօք ամաչեսցէ սատանայ ,  
քակտեսցին մեքենայքն ,  
բարձցին որոգայթքն , պար-  
տեսցին մարտուցեալքն , պա-  
կասեսցին զէնքն սայրասուրք ,  
մերժեսցի մէզն , փարատես-  
ցի խաւարն , մեկնեսցի մա-  
ռախուղն : Բազուկ քո հովա-  
նասցի , և աջ քո կնքեսցէ .  
վասն զի գթած ես և ողոր-  
մած , և անուն քո կոչեցեալ  
է 'ի վերայ ծառայից քոց : Եւ  
քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով  
փառք և իշխանութիւն յա-  
ւիտեանս յաւիտենից . ամէն :





# Ա Ղ Ե Ր Ս

## ԱՌ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵՍԼՍՆ

ԱՆՄԱՀ գառինն հզօրի ,  
Որ միշտ զենեալ եւ կենդանի ,  
Երկոտասան գառանցդ խմբի ,  
Ձեզ այս աղերս մատուցանի :

Սուրբ Պետրոսի եւ Անդրէի ,  
Երկուց եղբարց նախակոչի ,  
Յակոբոսի , Յովնաննիսի ,  
Ձկնորս որդիքն Ձերեթի .

Փիլիպպոսի , Բարթոլղիմէի ,  
Թովմայի եւ Մատթէոսի ,  
Յակոբ Ալփեայ Թադէոսի ,  
Շմաւոնի , Մատաթէի ,

Երկոտասան առաքելոց ,  
Ի Գրիստոսէ պսակելոց :

Այս են բաղձանք սրտից մերոց ,  
Փրկել զմեզ յայսոց պղծոց :  
Եւ լիցի պահապան ծառայիս Աս-  
տուծոյ . ամէն :





Պարծանք հաւատացելոց 'ի Քրիստոս  
և գովեստ սուրբ Խաչին որ երեւեցաւ  
Երուսաղէմ յաւուրս Կիւրղի հայրա-  
պետին, Մայիսի Է :

Խ<sup>Ս.ՁՆ</sup> Քրիստոնէից յոյս .  
Խաչն կուրաց առաջնորդ .  
Խաչն մոլորելոց դարձուցիչ .  
Խաչն աղքատաց մխիթարու-  
թիւն . Խաչն մեծատան սանձ .  
Խաչն ամբարտաւանից քակ-  
տումն . Խաչն ախոյեան դի-  
ւաց . Խաչն բանասարկուին




յաղթութիւն. Խաչն մանկանց  
դաստիարակ . Խաչն աղքա-  
տաց մեծութիւն . Խաչն ան-  
յուսից յոյս . Խաչն նաւավա-  
րաց նաւապետ . Խաչն տագ-  
նապելոց հանգիստ . Խաչն  
պատերազմողաց պարիսպ .  
Խաչն հայր որբոց . Խաչն վե-  
րակացու այրեաց . Խաչն ա-  
նիրաւաց դատաւոր . Խաչն  
արդարոց խորհրդակից . Խա-  
չքն նեղելոց հանգիստ . Խաչն  
տղայոց պահապան . Խաչն ա-  
րանց գլուխ . Խաչն ծերոց  
կատարումն . Խաչն խաւարե-  
լոց լոյս . Խաչն թագաւորաց  
վայելչութիւն . Խաչն զէն յա-



Լիտենական . Խաչն բարբա-  
րոսաց ազատութիւն . Խաչն  
անխրատից իմաստութիւն .  
Խաչն անօրինելոց օրէնք . Խա-  
չքն մարգարէի քարոզ . Խաչն  
առաքելոց պատմութիւն . Խա-  
չքն մարտիրոսաց պարծանք .  
Խաչն վանականաց պահապան .  
Խաչն կուսանաց զգաստու-  
թիւն . Խաչն քահանայից ու-  
րախութիւն . Խաչն եկեղեց-  
ւոյ հիմն . Խաչն տիեզերաց  
զգուշութիւն . Խաչն մեհենից  
աւերիչ . Խաչն բազնաց կոր-  
ծանիչ . Խաչն ճենճերաց ա-  
պականիչ . Խաչն Հրէից դայ-  
թակղութիւն . Խաչն ամբա-



ըրշտաց կորուստ . Խաչն տը-  
կարաց զօրութիւն . Խաչն հի-  
ւանդաց բժշկութիւն . Խաչն  
բորոտաց սրբիչ . Խաչն ան-  
դամալուծաց ուղղիչ . Խաչն  
պագշտաց բժշկութիւն . Խա-  
չքն քաղցելոց հաց . Խաչն ծա-  
րաւելոց աղբիւր . Խաչն մեր-  
կաց վերարկու . Խաչն ան-  
բարբառ բարեխօս ծառայիս  
Աստուծոյ . ամէն :





ԱՆՈՒԱՆՔ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԱՑՆ  
ՈՐՔ ԵՆ ԲԱՐԵՒՕՍ ՎԱՍՆ ՄԵՐ

**ԲԱՐԵՒՕՍՈՒԹԵԱՄԲ Աստուածա-**  
յին սուրբ նշանին և անբար-  
բառ բարեխօսին Քրիստոսի  
վասն ազգի մարդկան՝ սրբոյ  
կենաց Խաչափայտին Քրիս-  
տոսի . Աւաղակի սուրբ նշա-  
նին . Վարագայ սուրբ նշա-  
նին . Երեւման սուրբ նշանին .  
Հաղբատայ սուրբ նշանին .  
Վանկոյ սուրբ նշանին . Կաղ-  
բայ սուրբ նշանին . Աղին-  
եայ սուրբ նշանին . Սերեխոյ  
սուրբ նշանին . Մառառայ  
սուրբ նշանին . Գանձասարայ  
սուրբ նշանին : Եւ Քրիստոսի



սուրբ գեղարդին . Գետար-  
գել սուրբ նշանին . Սպարա-  
նից սուրբ նշանին . Կարմրակ  
սուրբ նշանին . Սքանչելա-  
գործ սուրբ նշանին . Ծիծ-  
ուան սուրբ նշանին . Աղթա-  
մարայ սուրբ նշանին . Սա-  
նահնու սուրբ նշանին . Կիպ-  
րոսի սուրբ նշանին . Վարոսի  
սուրբ նշանին , Կոստանդիա-  
նոսի սուրբ նշանին և Տապա-  
նակի սուրբ նշանին . Վրաց  
Հուռմոց սուրբ նշանին . Կոս-  
տանդնուպօլսոյ սուրբ նշա-  
նին . Հապէշու և Խպտոյ  
սուրբ նշանին . Հայունեաց  
սուրբ նշանին որ 'ի գալթա-



տեանն յառաջագոյն . Գայ-  
լակլայ սուրբ նշանին . Հնդու  
սուրբ նշանին . Կապնկայ  
սուրբ նշանին . Պիզեռու  
սուրբ նշանին . Հռիբսիմէի  
սուրբ նշանին . Բողու սուրբ  
նշանին . Սարի սուրբ նշանին :  
Եւ այլ ամենայն սուրբ նշա-  
նացն որք ընդհանուր տիե-  
զերս իցեն՝ սոցին սուրբ և  
արժանաւոր աղօթիւքն և ան-  
բարբառ բարեխօսութեամբն  
ողորմեա ծառայիս քո :





ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ  
ԶՈՐ ԱՐՍՐ

Ե՛հ Քրիստոս բժշկեաց 'ի  
ժողովրդենէն բազում հիւան-  
դքս . լուսաւորեաց զկոյրս ,  
հալածեաց 'ի մարդկանէ ըզ-  
դեւս , սրբեաց զբորոտս ,  
զնացոյց զանդամալոյժն՝ որ  
'ի բեթհեզդայ անկեալ զնէր  
երեսուն և ութ ամ , և յա-  
րոյց 'ի մեռելոց զչորեքօրեայ  
մեռեալն . և այլ անթիւ ըս-  
քանչեւիս և հրաշագործու-  
թիւնս արար : Նոյն ողորմու-  
թեամբն իւրով հեռի արաս-  
ցէ 'ի մէնջ զգլխացաւն , զա-  
չաց ցաւն , զականջացաւն ,



զատամանց ցաւն , զսրտացա-  
ւքն , զմիջաց ցաւն , զկշտա-  
ցաւն , զխիթն որովայնի , ըզ-  
ծնկացաւն . և յամենայն ցեղ  
ցաւոց ազատեսցէ , և օղնա-  
կան և պահապան լիցի ծա-  
ռայիս Աստուծոյ . ամէն :





Վերստին յաւելլուած կրկին հեծու-  
թեան նորին հսկողի առ նոյն աղերս  
մաղթանաց բանի :

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ  
ԱՍՏՈՒԾՈՅ

ԲԱՆ ԶԴ.

Ս. ԱՐՔԱՅ Երկնաւոր, թա-  
գաւոր բարձրեալ, Տէր բո-  
լորից, ամենից ակնկալու-  
թիւն, ստեղծող տեսականաց,  
հաստիչ իմանալեաց, պատ-  
ճառ եղանութեանց, կազմիչ  
հանդերձելոց, տուիչ լուսոյ,  
առիթ առաւօտու, պատրաս-  
տիչ վաղորդայնի, երեւեցու-  
ցիչ երեկորի, տարրիչ խաւա-  
րի : Արուեստաւոր բարեհը-  
նար, իմաստութեան գոր-



ծօնեաց, քաւարան օրհնեալ,  
հալիչ մեղանաց, հալածիչ  
ցաւոց, քակտիչ դառնութեանց,  
պահպանարան հանդրատեան,  
հնարք նիրհման, յարմարիչ քնոյ,  
պարգեւիչ ննջման: Շնչոյ յարակարգութիւն,  
զգայութեան տեւողութիւն,  
ցրիչ ցնորից, յեղանակիչ անըջոց,  
փոխարկութիւն զարհուրմանց,  
այլայլութիւն տխրութեանց,  
խափանիչ խիթմանց, ընդարձակիչ  
կարծեաց, համադրութիւն ծփմանց,  
ահազնութիւն խարդախմանց,  
հարուածիչ դիւաց, փախուցիչ



ախտից , բնկղմիչ գայթակ-  
ղութեանց :

Բ. Պաշտպանեա երկնաա-  
տեղծ ձեռամբդ , զօրացո  
բարձրացեալ քո աջովդ , ամ-  
փոփեա ամենակալդ թեւօք ,  
ծածկեա Աստուածեան խնա-  
մօքդ , ամրացո վերակացու-  
թեամբ վերնայնոցդ : Շուր-  
ջանակի պարսպեա գումար-  
տակօքդ անմահից , յամե-  
նուստ պարփակեա կցորդու-  
թեամբ հրեշտակացդ , վան-  
եա զքնդդ իմամարտն իմ զին-  
ւորութեամբ զուարթնոցդ ,  
պատսպարեա զսասանեալս՝  
Աստուածածնիդ մաղթանօք ,



զբանակս անդրանկացդ բա-  
րեկարգեա ինձ պահասպան :  
Բաց ընդ աչացս դիմաց և  
զմտացս իմ տեսանելիս , ըզ-  
գաստ արա ընդ ոգւոցս և  
զժանրաբեռն կրիցս դանդա-  
ղութիւն , վերացո Տէր 'ի ըզ-  
գայութեանցս զմածեալս յի-  
մարութիւն . բարձ , միայն  
բարեգործ , զպատրուակիս  
թանձրութիւն : Ընդ սկզբան  
բերմանս լուսոյ՝ զողորմութիւն  
քո ծագեա , ընդ ելից արե-  
ւուն՝ արդարութեան արե-  
գակնդ 'ի յանձկութիւն սըր-  
տիս մտցէ . ճառագայթ քո  
փառացդ 'ի յիմաստիցս խոր-



հըրդանոց ջահեացի : Խաչիդ  
տեառնագրութիւն ընդ շուն-  
չքս և ընդ մարմինս համաս-  
փիւռ տարածեացի : Յանձն  
առնեմ քեզ յաւուրս՝ դրո  
յարմարեալ տաղաւարս պահ-  
պանաւ ոգւոյս որ 'ի սմին :  
Զի դու ես Սատուած անքրն-  
նին , առ ամենեւին բաւական  
և յամենայնում բովանդակ ,  
օրհնեալ յաւիտեանս . ամէն :






Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍԻՔ  
ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

ԲԱՆ ԶԹ.

ԱՍՏՈՒԱԾ և Տէր, կեանք և  
արարիչ, ողորմած, գթած,  
լոյս, երկայնամիտ, անոխա-  
կալ, մարդասէր, ամենա-  
գութ, պարգեւատու, փրկ-  
իչ, օրհնեալ, գովեալ, բա-  
րերանեալ: Դարան ամրու-  
թեան, պատասպարան վատա-  
հութեան, առանց նենգու-  
թեան բարի, առանց խաւա-  
րի ճառագայթ, քաւիչ մե-  
ղաց, ողջացուցիչ վիրաց, ան-  
հատանելեաց հնարք, անմատ-  
չելեաց հպաւոր, անյուսու-



Թեան ելք , անուն քո խոս-  
տովանեալ Աստուծոյ Որդի .  
և Հօր քո ընդ քեզ հզօրի  
և ահաւորի , և Հոգւոյդ ա-  
մենակալի և ընդ քեզ եր-  
կբրպագեււոյ՝ փառք և պաշ-  
տօն դռհաբանութեան յա-  
ւիտեանս . ամէն :



Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻՅ ԽՕՍԲ  
ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

ԲԱՆ Գ .

Ա . ԲԱՐԵՐԱՆԵԱԼ Աստուած երկ-  
նաւոր , միայն արարիչ , Տէր  
ամենակալ , մեծութիւն ա-  
հեղ , գթութիւն օրհնաբա-  
նելի , ողորմութիւն խոստո-



վանելի, բարերարութիւն երկրապագելի, խնամակալութիւն պաշտելի, մարդասիրութիւն տօնելի, պահպանութիւն խնկելի : Բարձրեալ անքննին, մերձաւոր կամարար, ապաւեն անկասկածելի, մխիթար սրտից, փարատիչ վշտաց, ապաքինիչ ցաւոց, սպառումն վհատութեանց, բարձումն պարտեաց, փոխարկիչ կարեաց, կարգաւորիչ կրից, յարմարիչ բանից, սանձարկու լեզուի : Շրջադրութիւն շնչոյ, կացուցիչ հազագի, ամփոփիչ խորհրդոց, կրթարան կամաց,



արձանացուցիչ յուզմանց ,  
հանդարտութիւն մտրկաց ,  
խաղաղութիւն ծփանաց , որ  
ունիս զթեւոց ամենընթաց իշ-  
խանականիս , և իմաստու-  
թեամբ նուաճեալ առ քեզ  
դարձուցանեց :

Բ. Գոհարանեալ միշտ ե-  
րախտաւոր , որ հեղութեամբ  
անհպարտութեան երկայնա-  
մրտեալ հանգչիս տենչանօք  
անճառ հրաշիւք յանձինս  
սրբոց : Թագաւոր էից համայ-  
նից , ամենայնիւ ծանուցեալ  
գթած . սկզբնահայր և նա-  
խաշաւիղ սիրոյն բնթացից .  
ճանապարհ կենաց , որ ա-



ուաջնորդես քաղցրութեամբ  
դիմելոյս 'ի լոյսդ վերին: Ձե-  
ռքնկալու մեծ վատահու-  
թեան, որ ոչ թողացուցանես  
գայթակղելոյս 'ի վայր կոր-  
ծանել. յուսոյ կերպարան,  
ճշմարիտ առ հաւատչէիւ ա-  
ղաչողաց մատանց յայտնի ե-  
րեւեալ. ապաւինութիւն հան-  
գըստեան, որ ոչ երբէք մատ-  
նես վտանգի դատապարտու-  
թեան: Ազատութիւն շնոր-  
հաճիր, որ տաս լիապէս ա-  
ռանց փոխատրութեան փրք-  
կանաց. առատութիւն աննա-  
խանձելի, որ քոյին փառա-  
ւորութեամբ զանարդ նիւթ



հողոյս ճոխացուցանես : Պայ-  
ծառութիւն անատուեր , որ  
ճառագայթիւք ահեղ բարձ-  
րութեան պարածածկեալ բզ-  
թշուառս՝ կրկին բարգաւաճ  
առնես : Քաւիչ մեղանայ  
բազմայ , որ զհերքեալս 'ի  
փրկութենէ առաջնովն պայ-  
ծառութեամբ նորոգեալ՝ վե-  
րբատին վայելչացուցանես :  
Հնարաւոր դիւրահաս առ ա-  
մենայն համբաւ գերամբար-  
ձութիւն յաւէտ յառաջեալ ,  
եւք վստահութեան առ խոս-  
տացելոցն վայելս . երանու-  
թիւն անձկալի , յոր զկեն-  
դանութիւն շնչոյս լքանելն է



ախորժելի , զի զքեզ գտից  
կենդանի : Կամք անսխառ  
րելի առ 'ի քաւութիւն գեր-  
ւոյս զօրացեալ ամենագովե-  
լի . անսխալելի դեղ կենաց ,  
որ և մեռելոց բնաւին եղծե-  
լոց առնես զսքանչելիս : Ամե-  
նաստեղծ աներկբայելի , որ  
զհուրբ կիզեալն և զհողմով  
հոսեալն և զժանեօք գաղա-  
նաց ծախեալն 'ի քթթել ա-  
կան նովին հիւթականու-  
թեամբ անպակաս յարուցա-  
նես : Անհաւասար համարձա-  
կութիւն , յորում Աստուա-  
ծօրէն պանծանօք պարծելն  
է իրաւացի :



Գ. Հայեաց Տէր, յերկնից  
զուարթ քաղցրութեամբ յա-  
մենակործան վտանգ նեղե-  
լոյս, և արա անդորր հան-  
դըստական դիւրաւոր ՚ի բազ-  
մատադնապս հեծութենէ:  
Եւ զյարուցեալ զումարս սա-  
տակչացն, եթէ սպառազէն ք-  
այսական դժնեայ հնարաւո-  
րութեան բուռն մարտակցաց  
պատկանեալ զինուք, եթէ  
մեղաց տգեղ և քո ատելի  
կերպարանք, եթէ դաւոց և  
ախտից վատնիչ և կորստա-  
կան նշմարանք, մերժեացես  
հանցես հատցես, խափա-  
նեացես և հալածեացես հեռի



սահմանաւ խապառ տարա-  
գրբեալ անդարձ որոշմամբ  
վերատին կորստեանն . և կա-  
ռուսցես կացուսցես նալա-  
տակ կենաց և ամուր մահար-  
ձան զնշան Խաչիդ ապաւի-  
նելոյս 'ի քեզ փրկութիւն :  
Եւ յայսմ անպարտ և անպա-  
տիր և անվանելի արուես-  
տից ահաւորիդ մեծութեան ,  
լուծցին որոգայթքն դալտ-  
նածածուկ սատանայականք ,  
կապտեսցին մեքենայքն ,  
վատնեսցին գայթակղութիւն-  
քքն , խայտառակեսցին հաղ-  
բիցն դրութիւնք , յայտնես-  
ցին երեւոյթք որսոյն , գրտ-



ցին նենգողին ծուղակք, վերասցին վարմին վերարկուք, տոչորեացին որոմանցն բոյսք, նզովեացին բռնաւորին չարաբանութիւնք, կտրեացի լար խարէութեան 'ի մահ որսողին : Պարտեացին պատրողին բանասարկութիւնք, պակասեացին զէնք զրպարտողին, անկցին սուսերք մահաբերին, սուղեացին սաղրողին պատրաստութիւնք, արձակեացին տուռնք տազնապողին : Այլայլեացին սուտ կերպարանք կեղծաւորին, սատակեացին խրոխտականացն խիստ յարձակմունք, ցրուեացին կցոր-



դուժիւնք կերչացն , բաժա-  
նեացին ազինք աւազակացն ,  
քայքայեացին բոյլք բարբա-  
րոսացն , քանդեացին ամրոցք  
ապստամբողացն , արգելցին  
ամպրոպք յանդգնելոցն , փա-  
րատեացին փորձողին անձ-  
րեւք , հալեացի և ցամաքեա-  
ցի եղեամն աղանդաւորին :  
Խորտակեացի եղջիւր գոռո-  
ղին , մանրեացին ամբառնա-  
լիք դրոշիցն կերպարանաց ,  
փշրեացին ամբարհաւաճու-  
թիւնք հպարտացելոցն , նա-  
հանջեացին դիմեցմուն ճա-  
կատելոցն , քակտեացին Տի-  
արանուժիւնք զօրացն Բե-



լիարայ՝ թէ անմարմինք և  
թէ մարմնաւորք, փախի-  
ցեն ընդ նոյն ճանապարհ 'ի  
մի շաւղաց հետոց յեօթն տա-  
րակոյս . 'ի գուբն ինձ փոր-  
եալ ինքեանք ընկճեացին :  
Յեղանակեացին ձմերուէնք  
ձանձրացուցչին, հատցիկապն  
կցորդութեան մշտաջան ա-  
ւազակին, նողկացի մտացս  
կայից համբոյր շողքորթին,  
ընդմիջեալ մեկնեացին նե-  
տաձգութիւնք նեղչին, կաց-  
ցէ 'ի սասանման նաւ խար-  
դախողին, խլեացին յարմա-  
տոց անտի ատամուէնք խա-  
ճանողին :



Գ. Վասն փայտիդ օրհնու-  
թեան կենաց՝ յորում պրկե-  
ցար Աստուածդ անբմբունե-  
լի, յիշատակաւ բեւեռացդ  
որով՝ ի գործի մահունն մա-  
ծուցար արարիչդ երկնի և  
երկրի, արեամբդ տէրունա-  
կանաւ՝ որով զվիշապն մեծ  
կարթիւ ամեալ որսացար,  
լեղւոյն դառնութեամբ՝ զոր  
արբեալ, զդեղատուութիւն  
կորուսչին արտաքս հեղեր,  
պատմարանութեամբ ըղձա-  
կան ճառիւք կրիցն սարսա-  
փելեաց՝ որով զլրբութիւն  
հակառակողին բմբերանեալ  
ամաչեցուցեր, անուամբդ ան-



հասականաւ ամենայնիւ ան-  
թարգմանելոյց՝ յորմէ դո-  
ղան և դատապարտին սոս-  
կացեալ սաստիկ սարսափ-  
մամբ բնութիւնք ամենայն  
երեւութից և աներեւութից,  
եղիցին այս ամենայն պար-  
գելք շնորհաց խոստովանե-  
լոյս 'ի պաշտպանութիւն, 'ի  
բժշկութիւն և 'ի քաւութիւն:  
Եւ մահաբեր դառնաթոյն օ-  
ձին, և որ 'ի նմա ազդեաց  
տիեզերադաւ չարութիւնն,  
'ի սասակումն եղիցի նորին .  
նոյն ինքն 'ի կորուստ և յան-  
բբժշկական հարուած տան-  
ջանացն սովաւ մատնեսցի,



կապեացի և բարսեղացի : Ե-  
ղիցի ողորմութիւնս ստեղծո-  
ղիդ ընդ իս , և շունչ ոգւոյս  
իմ ընդ քեզ անբաժանօրէն  
կապաւ միացեալ 'ի մի :

Ե. Եւ որ ոք ընթերցցի զայս  
աղերս ձայնի մաղթանաց գոչ-  
ման աղօթից հայցման ծե-  
րոյ և տղայոյ , կուսի և երի-  
տատասարդի , և եթէ յա-  
ղախնաց ոք պաղատեսցի Աս-  
տուածասիրաբար , հաւասա-  
րապէս անաչառութեամբ ըն-  
կալցին 'ի քէն մասն երանու-  
թեան պարտուց ազատու-  
թեան , հաստեալ վերստին  
յանարատութիւննորոյ մաք-



րութեան, նկարեալ դարձեալ զքոյդ կերպարան անփոփոխելի: Ահա տիրապէս հընարաւոր, զօրեղ, անպատում, անհաս, անխմանալի, տեսցես աստանօր 'ի հառաչանս կողկողանաց այսր հեծութեան, որ 'ի բարբից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն Հօր քո երկնաւորի և բարերարի, և Հոգւոյդ սրբոյ փառակցի և կենդանատուի, Աստուածածնիդ բարեխօսութեամբ և խնդրուածովք ամենայն սրբոց: Զի դու ստեղծեր զամենայն և 'ի քէն եղեն ամենայնք, և դու տիրես



ամենայնի, և քեզ փառք յա-  
մենեցունց, միդ յիսկութենէ  
անժամանակ Երրորդութեա-  
նըդ, զուգակցապէս փառա-  
ւորեալ յանբաւս, և յաւի-  
տենից յաւիտեանս, ամէն :



Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՅՍԻ ԸՆԴ  
ԱՍՏՈՒԾՈՅ

ԲՄՆ ՂԵ՛

Ա. ԱՐԵՅԱԿՆ արդար, ճառա-  
գայթ օրհնեալ, լուսոյ կեր-  
պարան, փափաք անձկու-  
թեան, բարձրեալ անքնին,  
զօրեղ անպատում, բարւոյ  
բերկրութիւն, յուսոյ տեսու-



Թիւն, գովեալ երկնաւոր, թա-  
գաւոր փառաց, Քրիստոս ա-  
րարիչ, խոստովանեալ կեանք,  
Եւ արդ՝ զթերութիւն վրի-  
պանաց բազմասխալ ճայնի  
եղկելոյս ամենազօրդ բանիւ  
լցեալ մատուցեալ յաղերս հա-  
ճութեան Հօր քումբարձրե-  
լոյ : Որ վասն իմ՝ ի փորձ ե-  
կիր անիծից, կերպարանեալ  
զիմ՝ նմանութիւն, ամենեւին  
կենաց օրհնութիւն, վերնոց  
և ներքնոց բարեխնամող տե-  
սուչ համայնից : Ձի թէ յան-  
ձրն առեր մեռանիչ վասն իմ,  
Աստուած և Տէրդ բողբե-  
ցուն, որչափ հաճեացիս առա-



ւելև այժմ վտանգ աւորս կը-  
րից կարեկցել, ընդ իմ պար-  
տաւորիս միշտ աղօթելով  
ազգակցաւ մարմնոյդ առե-  
լոյ 'ի մէնջ' առ համապա-  
տիւղ քս Հայր :

Բ. Եւ վասն արեանդ պատ-  
ուականի միշտ մատուցելոյ  
'ի հաճութիւն կամաց առաք-  
չիդ՝ բարձցին վտանգք մե-  
ղուցեալ դատապարտելոյս,  
թողցին պարտիքն, ապաքի-  
նեսցի ամօթն, մուսացին  
պատկառանքն, բարեգոր-  
ծեսցին դատակնիքն, սատա-  
կեսցին որդունքն, վերացի  
լան, հանդարտեսցէ կրճու-



մքն առամանցն , սպառեացին  
ողբքն , հատցին արտասուքն ,  
մերժեցի սուգն , հալածեա-  
ցի խաւարն , վատնեացի հու-  
րըն սաստկութեան , հերքեա-  
ցին տանջանարանքն բազմօ-  
րինակք :

Գ. Եկեացեն գթութիւնք կա-  
մողիդ և պարգեւողիդ կե-  
նաց ամենից , ծագեացի լոյ-  
սըդ , արագեացէ փրկութիւ-  
նըդ , հասցէ օգնութիւնդ ,  
ժամանեացէ այցելութիւնդ ,  
կանխեացէ ցօղդ ողորմու-  
թեան , յառաջեացէ արբուս-  
ցէ զանդաստանս պասքեալ  
անկեալ ոսկերացս թշուառու-



Թեամբ 'ի վիհն մահու . ծաղ-  
կեցուսցէ պտղաբերեսցէ բա-  
ժակդ երկնաւոր արեան կե-  
նարարիդ զերկիրս խնամեալ  
աւուրն լուսոյ . որ անծախա-  
պէս միշտ պատարագի յի-  
շատակ կենաց փրկութեան  
հոգւոց ննջեցելոց : Զի ամե-  
նայնիւ մահացեալ հոգիս  
մարմնովս մեղաց՝ շնորհօք քո,  
գթած , 'ի քեզ դօրացեալ  
քեւ նորոգեցայց , զատեալ  
'ի մեղաց անմահ կենդանու-  
թեամբ 'ի յարութեանն ար-  
դարոց , Հօր քում օրհնե-  
ցեալ : Ընդ որում քեզ փառք,  
և Հոգւոյդ սրբոյ բարեբա-



նութիւն վայելչական գոհութեամբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :



ԳՈՀԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱՌԵՐԿԻՆՍ

ԳՈՀԱՆԱՄԲ զքէն, ո՛վ ամենասուրբ Երրորդութիւն, Հայր և Որդի և Հոգի սուրբ, որ ասացեր արասցուք մարդ ըստ պատկերի մերում, և առերհող յերկրէ, և փշմամբ օրհնեալ շնչոյ քո գոյացուցեր զմարդն Ադամ. վասն որոյ օրհնեմք զմեծութիւն քո : Գոհանամք զքէն, Տէր, որ զմարդն Ադամ զարդարեցեր



և օթնարփեան շնորհօք և երկոտաան փառօք . վասն որոյ օրհնեմք զշնորհս քո : Գոհանամք զքէն , Տէր , որ 'ի դրախան եղեմ եղեք զԱդամ անճառելի անպատմելի , և հիասրաշ խնդուծեամք . վասն որոյ օրհնեմք զարարչութիւն քո : Գոհանամք ըզքէն , Տէր , որ յետ պատրելոյն Ադամայ՝ յԱրդեղայտս անուն օձէն , և արատքսերոյն 'ի դրախտէն , որով 'ի դժոխս գրաւեցաւ , ազատեցեր . վասն որոյ օրհնեմք զփրկութիւն քո : Գոհանամք զքէն Տէր , որ առաքեցեր



զանդրանիկն քո զՄիածին  
Բանն՝ որ վասն մերոյ վերկու-  
թեան խաչեցաւ, թաղեցաւ,  
յարեաւ, համբարձաւ. վասն  
որոյ օրհնեմք զմեծ մարդասի-  
րութիւն քո: Գոհանամք զքէն,  
Տէր, որ զսուրբ մարմին և  
զսուրբ արիւն նորա պարգե-  
ւեցեր մեզ կերակուր հոգւոյ  
և կենդանացուցիչ. վասն որոյ  
օրհնեմք զպարգեւս քո:

Գոհանամք զքէն, Տէր, որ  
զմկրտութիւն ուսուցեր 'ի  
Յորդանանէ, և կոչեցեր 'ի  
խաւարէ 'ի լոյս, և ետուր  
զորդէգրութիւնն վերին. վա-  
սն որոյ օրհնեմք զշնորհա-



բաշխութիւն քո : Գոհանամք  
զքէն , Տէր , որ եօթն խոր-  
հուրդ եկեղեցւոյ կազմեցաւ  
'ի քոյինդ շնորհէ , և խոստո-  
վանութեամբ թողութիւն շք-  
նորհեցեր . վասն որոյ օրհ-  
նեմք զառատապարգեւ գը-  
թութիւն քո : Գոհանամք ըզ-  
քէն , Տէր , որ անձրեւ և  
ցօղ տաս երկրի , և բուսանի  
հաց և հանդերձ և ամենայն  
մանդեաց կերակուր , վասն ո-  
րոյ օրհնեմք զբազմաբաշխ  
ողորմութիւն քո : Գոհանամք  
զքէն , Տէր , որ տաս յաշո-  
ղութիւն վաստակոյ մերոց ,  
և զշնորհս արուեստաւորաց .



վասն որոյ օրհնեմք զբազ-  
մարուեստ տեսչութիւն քո :  
Գոհանամք զքէն , Տէր , որ  
միշտ քաղցրութեամբ հայիս  
յարարածս քո , և օր ըստ օ-  
րէ շնորհես զբազմագեղ ու-  
ղորմութիւն քո . վասն որոյ  
օրհնեմք զանչափ գթութիւն  
քո : Գոհանամք զքէն , Տէր ,  
որ մեզաւորաց և զղջացելոց  
թողութիւն շնորհես , ներես ,  
և ոչ կզծանես . վասն որոյ օրհ-  
նեմք զանյիշաչարութիւն քո :  
Գոհանամք զքէն , Տէր , որ  
զեղանակս տարւոյն՝ զամա-  
ռքն և զձմեռն , զաշունն և  
զգարունն , արարեր ըստ բը-



նութեան մերում, վասն որոյ  
օրհնեմք զարարչագործու-  
թիւն քո : Գոհանամք զքէն,  
Տէր, որ յայսմ ամի եւս ապ-  
րեցուցեր զմեզ անվրդով,  
անմահ և անկասկած. վասն  
որոյ օրհնեմք զտէրութիւն  
քո : Գոհանամք զքէն, Տէր,  
որ զմեզ 'ի մահտարածամէ  
և յամենայն պատահարաց  
պահեցեր. վասն որոյ օրհ-  
նեմք զպահպանութիւն քո :  
Գոհանամք զքէն, Տէր, որ  
'ի հրկիզութենէ, 'ի հեղեղէ,  
'ի շարժմանէ, 'ի կայծականց,  
'ի խորշակէ և 'ի սատակմանէ  
ապրեցուցեր. վասն որոյ օրհ-



նեմք զապաւինութիւն քո :  
Գոհանամք զքէն , Տէր , որ  
օրհնեցեր 'ի լերինն Ձիթեն-  
եաց զկաթողիկոսունս , զՊատ-  
րիարքունս և զԵպիսկոպո-  
սունս՝ որ ճրագ և լոյս եղեն  
աշխարհի . վասն որոյ օրհ-  
նեմք զշնորհաբաշխութիւն  
քո : Գոհանամք զքէն , Տէր ,  
որ ընձեռեցեր աղամեանս  
բնութեան քահանայութիւն՝  
որ հրեշտակաց էր կարգ ,  
յաղագս թողութեան յան-  
ցանաց մերոց . վասն որոյ  
օրհնեմք զփրկութիւն քո :  
Գոհանամք զքէն , Տէր , որ  
զսարկաւագունս , զպաշ-



տօնեայս՝ և զջահնկարս սահ-  
մանեցեր . վասն որոյ օրհ-  
նեմք զլուսաւորութիւն քո :  
Գոհանամք զքէն , Տէր , որ  
զբանաւոր հօտ՝ զժողովուրդս  
քո , ընկալեալ ունիս 'ի ծոց  
քո , և որպէս զտապանն Նոյ-  
եան աղատես 'ի հեղձմանէ  
մեղաց . վասն որոյ օրհնեմք  
զղարմանահրաշ գթութիւն  
քո : Գոհանամք զքէն , Տէր ,  
որ զմեղուցեալ ժողովուրդն  
ոչ պատժես 'ի տան քում  
քաւարանի , այլ զղարձումս  
նկատես . վասն որոյ օրհնեմք  
զերկայնամտութիւն քո : Եւ  
վասն մեծի և բարձու ողոր-



մութեան քո , խոնարհեցո ,  
Տէր , զունկն քո 'ի ժամուս  
յայսմիկ և տուր մեզ յերկ-  
նից 'ի սրբութենէդ՝ շնորհ ,  
ձիր , ողորմութիւն , քաղց-  
րութիւն , կարողութիւն , մե-  
ղայ թողութիւն , առատու-  
թիւն , մեծութիւն , աշխար-  
հիս խաղաղութիւն , խնդու-  
թիւն , լուսաւորութիւն , հա-  
ւատս , յոյս , սէր , մաքրու-  
թիւն , առաքինութիւն , բար-  
եաց լիութիւն , հանդարտու-  
թիւն , անդորրութիւն , զօգ-  
նութիւն , հաշտութիւն և  
օրհնեալ արքայութիւն : Եւ  
քեզ ընդ Որդւոյ , և ընդ



սուրբ Հոգւոյդ վայելէ  
փառք և պատիւ յաւիտեա-  
նքս . ամէն :

Վ Ե Ր Զ



Հաւատով խոստովանիմ . . .	5
Աղօթք պահպանութեան . . .	21
Աղօթք վասն կապանաց . . .	47
Աւետարան ըստ Մատթէոսի Եւ մինչդեռ ան . . . . .	49
Աւետարան ըստ Մարկոսի Եւ ել լուր նորա . . . . .	51
Աւետարան ըստ Լուկասու Եւ եղեւ ընդ . . . . .	53
Աւետարան ըստ Յովհաննու Յետ այսորիկ տօն . . . . .	56
Գարձ Կիպրիանոսի . . . . .	59
Աղօթք Յովհաննու Գառնեց- ւոյ առ սուրբ Աստուածա- ծինն . . . . .	81
Աղօթք Յովհաննու Գառնեց- ւոյ վասն ճանապարհի . . .	86



- Աղերս վասն զաւակ ծնանելոյ 88  
Աղերս առ սուրբ Ստեփաննոս 91  
Աղօթք առ երկնային զօրս . 92  
Աղօթք առ սուրբ զինաւորս  
Քրիստոսի . . . . . 94  
Աղօթք վասն ական եւ լեզ-  
ուի չարի . . . . . 95  
Աղօթք Գրիգորի Լուսաւորչին 96  
Մաղթանք առ սուրբ Լու-  
սաւորիչն . . . . . 100  
Աղօթք առ դրանն սուրբ Ե-  
կեղեցւոյ . . . . . 101  
Բան Գրիգորի Նարեկացւոյ  
ընդդիմամարտ դիւաց . . 102  
Մաղթանք Նարեկացւոյ ընդ-  
դէմ ամենայն չարեաց . . 108  
Աղօթք Նարեկացւոյ . Որդի  
Աստուծոյ կենդանւոյ . . 113  
Աղօթք Նարեկացւոյ . Աստ-  
ուած յաւիտենական . . . 116



Աղերս առ սուրբ առաքեալսն	120
Գովեստ սուրբ Խաչին . . .	121
Անուանք սուրբ նշանացն .	125
Հրաշագործութիւնն Քրիստ .	128
Բան Նարեկացւոյ . Արքայ երկնաւոր . . . . .	130
Բան Նարեկացւոյ . Աստ- ուած եւ Տէր . . . . .	135
Բան Նարեկացւոյ . Բարե- բանեայ Աստուած . . . . .	136
Բան Նարեկացւոյ . Արեգակն արդար . . . . .	151
Գոհարանութիւն առ երկինս	156

















